- Kakachia, K., & Metreveli, M.** (2013). *Foreign policy: The quest for sustainable security*. Konrad Adenauer-Stiftung. https://www.kas.de/c/document_library/get_file?uuid=ab4f5ccc-a514-bce0-655b-75096aa181a7&groupId=252038
- Mikeladze, L.** (2022). *Georgia's external communication: Grand strategy and tailored approaches*. Mikeladze Foundation. https://mikeladzefoundation.org/uploads/files/2022-09/1662634886_georgias-external-communication_grand-strategy-and-tailored-approaches_dimitri-tskitishvili.pdf
- Ministry of Foreign Affairs of Georgia (MFA Georgia).** (2006). *Foreign policy strategy 2006-2009*. https://gfsis.org.ge/media/download/GSAC/resources/115_1973_997704_Strategy_MFA2006-2009En.pdf

- Ministry of Foreign Affairs of Georgia** (MFA Georgia). (2021). *Georgian Foreign Ministry unveils 10-year action plan* (10 August 2021). Civil.ge. <https://civil.ge/archives/436078>
- Sportel, E., & Tchkoidze, V.** (2011). *Strengthening oversight of the security sector in Georgia: An agenda 2011*. Centre for European Security Studies. <https://cess.org/wp-content/uploads/2019/12/Georgia-GP-27.pdf>
- Tskitishvili, D.** (2022). *Georgia's external communication: Grand strategy and tailored approaches* (August 2022). Mikeladze Foundation. https://mikeladzefoundation.org/uploads/files/2022-09/1662634886_georgias-external-communication_grand-strategy-and-tailored-approaches_dimitri-tskitishvili.pdf

REFERENCE LIST

- Caucasus Watch.** (2019). Georgian Government adopts foreign policy strategy for 2019-2022. *Caucasus Watch*. <https://caucasuswatch.de/en/news/georgian-government-adopts-foreign-policy-strategy-for-2019-2022.html>
- Kakachia, K., & Metreveli, M.** (2013). *Foreign policy: The quest for sustainable security*. Konrad-Adenauer-Stiftung. https://www.kas.de/c/document_library/get_file?uuid=ab4f5ccc-a514-bce0-655b-75096aa181a7&groupId=252038
- Mikeladze, L.** (2022). *Georgia's external communication: Grand strategy and tailored approaches*. Mikeladze Foundation. https://mikeladzefoundation.org/uploads/files/2022-09/1662634886_georgias-external-communication_grand-strategy-and-tailored-approaches_dimitri-tskitishvili.pdf
- Ministry of Foreign Affairs of Georgia** (MFA Georgia). (2006). *Foreign policy strategy 2006-2009*. https://gfsis.org.ge/media/download/GSAC/resources/115_1973_997704_Strategy_MFA2006-2009En.pdf
- Ministry of Foreign Affairs of Georgia** (MFA Georgia). (2021). *Georgian Foreign Ministry unveils 10-year action plan* (10 August 2021). Civil.ge. <https://civil.ge/archives/436078>
- Sportel, E., & Tchkoidze, V.** (2011). *Strengthening oversight of the security sector in Georgia: An agenda 2011*. Centre for European Security Studies. <https://cess.org/wp-content/uploads/2019/12/Georgia-GP-27.pdf>
- Tskitishvili, D.** (2022). *Georgia's external communication: Grand strategy and tailored approaches* (August 2022). Mikeladze Foundation. https://mikeladzefoundation.org/uploads/files/2022-09/1662634886_georgias-external-communication_grand-strategy-and-tailored-approaches_dimitri-tskitishvili.pdf

АНАЛИЗ ВНЕШНЕЙ ПОЛИТИКИ ГРУЗИИ И ВНЕШНЕПОЛИТИЧЕСКИХ ДОКУМЕНТОВ ПРАВИТЕЛЬСТВА

КАРЕН КАЗАРЯН

Принятые правительством внешнеполитические концепции и документы важны для понимания внешней политики Грузии и особенно региональной политики. Грузия и ее внешняя политика входят в число приоритетов изучения внешней политики РА, учитывая высокий уровень армяно-грузинских отношений, транзитное значение Грузии, существование большой армянской общины, проживающей в Грузии, а также взаимные интересы и интересы в двусторонних отношениях. В статье мы анализируем концепции внешней политики Грузии и документы, принятые правительством, их приоритеты и изменения, произошедшие после геополитических событий. При написании научной работы мы использовали системные методы историко-сравнительного, событийного и контент-анализа. В ходе нашей научной работы мы поставили перед собой следующие цели:

Изучить концепции внешней политики Грузии и документы, принятые правительством, концептуальные изменения, произошедшие после геополитических событий, а также актуальность концепций и некоторых внешнеполитических документов,

Достижения:

Концепции внешней политики Грузии претерпели множество изменений после геополитических событий, и не полностью отражают реальность, существующую во внешней политике Грузии.

Ключевые слова. Грузия, Россия, Запад, внешняя политика, концепция, Южный Кавказ, двусторонние отношения, многосторонняя дипломатия.

ANALYSIS OF GEORGIAN FOREIGN POLICY AND FOREIGN POLICY DOCUMENTS ADOPTED BY THE GOVERNMENT

KAREN GHAZARYAN

The foreign policy concepts and documents adopted by the government are important for understanding the foreign policy of Georgia and especially the regional policy. Georgia and its foreign policy are among the priorities of the study of RA foreign policy, taking into account the high-level Armenian-Georgian relations, the transit importance of Georgia, the existence of a large Armenian community living in Georgia, as well as mutual interests in bilateral relations. In the article, we analyze the concepts of Georgia's foreign policy and the documents adopted by the government, their priorities and the changes that took place after geopolitical developments. While writing the scientific work, we

used the systematic methods of historical-comparative, event and content analysis. In the course of our scientific work, we have set ourselves the following goals:

Study the concepts of Georgia's foreign policy, the documents adopted by the government, conceptual changes that took place after geopolitical developments, and also the relevance of concepts some foreign policy documents.

Achievements:

Georgia's foreign policy concepts have undergone many changes after geopolitical developments, and do not fully express the reality that exists in the foreign policy adopted by Georgia.

Key words. Georgia, Russia, West, foreign policy, concept, South Caucasus, bilateral relations, multilateral diplomacy.

Հոդվածը ստացվել է՝ 20.09. 2024

Հոդվածն ուղարկվել է գրախոսման՝ 22.09. 2024

Հոդվածը երաշխավորվել է տպագրության՝ 30.10.2024

ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ԹԱԳԻ ՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ

ՄԱԴՈՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան
Էլ. *huugli*՝ madona.martirosyan,94@list.ru

DOI: 10.24234/scientific.v2i47.163

ԱՄՓՈՓՈՒՄ

Աշխարհի հին համակարգերում գլխավոր անձինք՝ թագավորները, իշխանավորները կարևոր խորհրդաբանական տարբերակիչ տարր են կրել, կրում էին ծիսական թագ-գլխանոցներ: Դրանք տարբերվում էին թե՛ իրենց արտաքին տեսքով, և թե՛ բովանդակային նշանակությամբ: Թագ-խույրը պատմում էր կրողի զբաղեցրած դիրքի, նվաճումների, ստացած տիտղոսների մասին:

Խույր-թագերը ունեին ոչ միայն տոհմային հաջորդականության փոխանցման նշանակություն այլ նաև կրում էր հոգևոր և աշխարհիկ խոհափիլիսոփայական բնույթ: Այդպիսին էր նաև Հայոց արքայից արքա Տիգրան Մեծի «Հայկական թագը»:

Սույն հետազոտության առարկան՝ Տիգրան Մեծի Հայկական թագի պատկերագրությունն է:

Հետազոտության նպատակն է՝ ցույց տալ որ Տիգրան Մեծի Հայկական թագն անտիկ դարաշրջանի բարձրաբանականներում, քանդակներում փորագիր քարերի և դրամների վրա պատկերված թագն է, որը կրում էին Տիգրան Մեծը, նրա հաջորդները և ազգակից կոմմագենյան ճյուղի Երվանդունի թագավորները հանդիսավոր պայմաններում: Տիգրան Մեծի թագը ստեղծվել է կրոնական գաղափարի հիմքով: Այն արտացոլանքն է Միհր աստծո ենթադրյալ ենթակայի: Այն բնիկ հայկական ծագում ունի և որևէ արքայական օտար խույրի նմանակում չէ::

Հետազոտության մեթոդական հիմք են ծառայել՝ վերլուծահամադրական, պատմահամեմատական, ժամանակագրական նկարագրական մեթոդները:

Հետազոտության վերջնարդյունքում պարզվել է, որ Տիգրան Մեծի թագի պատկերագրական ակունքները սկզբնավորվել են Հայկական լեռնաշխարհում առկա հնագույն ժայռապատկերներից և ստանալով ինստիտուցիոնալ ինքնության իրավունք, ենթարկվելով որոշակի հղկման, մուտք են գործել Վանի թագավորության աստվածությունների պատկերագրություն (Խալդի, Թեյշեբա, Շիվինի), անցել Միհրի աստվածությանը, Երվանդունիների թագավորությանը, Կոմմագենեի և Ծոփքի թագավորներին մաշտոցյան այբուբենին և իրենց կատարելագործված տարբերակով հայտնվել Հայոց Տիգրան Մեծ արքայից արքայի, Արտավազդի և Արտաշեսյան մյուս արքաների թագերին: Պատմաբան-հետազոտողներ Գ.Ա.Տիրացյանի, Բ.Թաշնեանի, Ժ.Խաչատրյանի, Ռ.Սուլլիվանի, Հայր Վարդան Հացունու և այլոց ուսումնասիրությունների արդյունքների

քննարկման համադրման միջոցով հանգել ենք եզրահանգման, որ հայկական Տիգրանյան թագը, պարսկական թագի հետ ունենալով նախնական նմանություն, այնուամենայնիվ բուն հայկական ծագում ունի և գծագրվել ու պատրաստվել է իր տիրոջ՝ Տիգրան Մեծի պատկերացումներին, ընկալումներին, զբաղեցրած դիրքին համապատասխան: Այն հայ ժողովրդի դարավոր պատմության հոգևոր և աշխարհիկ իշխանությունների բացարձակ միահյուսման արդյունք է՝ վկայված Հայկական լեռնաշխարհի ժայռապատկերների, արձանագրությունների և հուշարձանների օրինակով:

Բանալի բառեր՝ Տիգրան Մեծ, Անտիոքոս I, արծիվ, ժայռապատկերներ, Խալդի Աստված, հայկական թագ, ութաթև աստղ (արև), Նեմրոս լեռան սրբավայր:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության նպատակն է վերլուծել Հայոց Տիգրան Մեծ արքայից արքայի թագի պատկերագրական ակունքները: Որոնք գալիս են Հայկական լեռնաշխարհում առկա և դարերի ընթացքում ոճական փոփոխության ենթարկված ժայռապատկերներից: Այդ խորհրդանշաններն են արծիվը և ութաթև աստղը (կամ արև), որը պատկերված է հայոց արքայի թագի վրա: Արևապատկերը և արծիվը զբաղեցրել են կենտրոնական տեղ մարդկանց աշխարհայացքում: Արևին վերագրվել է արարչագործության ուժ՝ որպես աստծո և, դրանով պայմանավորված, մարդու առաջընթացը և արգասավորությունը: Իսկ արծիվը մարմնավորում էր իմաստության և չար ուժերից պաշտպանելու խորհուրդ: Հայոց արքայի թագի և նրա պատկերագրական առանձնահատկությունների մասին տեղեկություններ են պարունակում մասնավորապես նրա հատած ոսկե, արծաթե և բրոնզե դրամները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Տիգրան Մեծի «Հայկական թագին» շատերն են անրադարձել որպես պատմամշակութային մեծ կոթողի: Սակայն առաջադրված նպատակին հասնելու համար կարող ենք ասել, որ ներկայացվող թեման՝ «Տիգրան Մեծ» թեմայի համատեքստում քիչ են անրադարձել: Եթե անգամ այդպիսիք առկա են ապա միայն այլ թեմաների համատեքստում: Ինչպիսիք են օրինակ՝ Խաչատուր Մուշեղյանի «Դրամական շրջանառությունը Հայաստանում: Սկզբից մինչև Ժ դար Յ.Ք.Ի, Միլիթարեան տպարան, Վիեննա, 1979», «Հայաստանի դրամական գանձերը, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1973», Խաչատրյան Ժ.Դ., «Ուրարտա-հայկական պաշտամունքային առնչությունները, «Բանբեր Երևանի համալսարանի, հասարակական գիտություններ», Երևան, «ԵՊՀ», 1998, №3 (96)», Тирация Г. А., «Армянская тиара: опыт культурно-исторической интерпретации, «Вестник древне истории», Академия наук СССР, Институт всеобщей истории, Москва, «Наука, 1982», Դումիկյան Ա.Վ., «Կոմմագենիի դրամներում հայկական թագի մեկնությունների հարցը ֆրանսիական պատմագրության մեջ,

«Լրաբեր Հասարակական գիտությունների», Երևան, «ՀՀ ԳԱԱ», 2015», Ատրպետ «Հայ թագաւորների դրամները. Յետ Աղէքսանդրեան շրջան, «Ազգագրական հանդէս», գիրք XXIII, «տպարան Ն.Աղայանցի», Թիֆլիս, 1912, թիվ 2», Վարդանյան Ռ., Մուղայան Գ., Վարդանյան Ա., և այլք, «Հայաստանի դրամաշրջանառության պատմություն, «ՀՀ կենտրոնական բանկ», Երևան, 2018», Տիգրան Հայազն, «Հայկական իշխանական զինանշանները, գիրք առաջին, «Հեղինակային» հրատարակություն, Երևան, 2005» և մի շարք այլ հոդվածներում ու գրքերում: Մենք փորձ ենք անում ամբողջական ներկայացնել քննվող թեման՝ կիրառելով պատմաժամանակագրական, համեմատական, նկարագրա-վերլուծա-համադրական մեթոդները:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Հարցի պատմությունից

Ճառագայթագարդ շրջանը որպես արևի պատկեր Հայկական լեռնաշխարհում հայտնի է դեռևս հնագույն ժայռապատկերներից (Մարտիրոսյան, Իսրայելյան, 1971)¹: Արեգակի նշաներն առատն են ժայռապատկերներում: Աստղերը և աստղախմբերը ներկայացված են 4-6-8 ճառագայթանշաններով (նկ. 1) (Թոխաթյան, 2015):

Դրանց հետագա զարգացումը տեսանելի է Վանի թագավորության որմնանկարներում (նկ.2) (Հովհաննիսյան, 1973): Արևի թևավոր սկավառակը «արև» նշանակությամբ ունեցել է նաև դրա հետ կապված «արքա, արքայական իշխանություն» իմաստ: Արևի սկավառակով բազմաթիվ կնիքներն են գործածվել արքայական իշխանության անունից որոշումներ, հրամաններ և այլ կարգի ակտեր հաստատելու համար (նկ. 3) (Մովսիսյան 2021)²: Ութանյուղ աստղը ունի «աստված» նշանակություն և, դրանով պայմանավորված, այն Միջագետքի բոլոր ժողովուրդների

¹ Այդ հարցին են նվիրված Հ.Մարտիրոսյանի և Հ.Իսրայելյանի հետազոտությունները, ըստ որոնց՝ Գեղամա լեռների նախնադարյան սրբավայրերում շատ են արևի, լուսնի և աստղերի՝ իրար մեջ ագուցված գծային կամ գոգավոր փոքրիկ շրջանակների կազմած օղակների, ճառագայթավոր գնդերի և անիվների տեսքով պատկերները:

² Թևավոր սկավառակի պատկերը կարող է լինել ոչ միայն արքայական իշխանության խորհրդանիշ, այլ նաև գրանշան, որի խոստուն վկայություններն են Հայկական լեռնաշխարհի ժայռապատկերները: Ութաթև աստղի կամ արծիվի պատկերների որպես գրանշան ծառայելու ուղեցույց կարող է հանդիսանալ Արտակ Մովսիսյանի «Հայաստանի նախամաշտոցյան գրավոր մշակույթի պատմություն» գրքի հավելվածում մանրամասնորեն ներկայացված՝ Կ. Թոխաթյանի, Հ.Մարտիրոսյանի, Լ.Ավանեսյանի կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքները, թե՛ ինչպես են այս խորհրդանիշերը ժայռապատկերներից հասնում մինչև մեր օրեր՝ ենթարկվելով իմաստային և ձևային փոխության (տե՛ս էջ 156, աղ. 14):

շրջանում դրվել է ցանկացած աստվածության անունից առաջ՝ շեշտելով, որ խոսքը աստծո մասին է (Պողոսյան, 2018)³:

Սա վկայում է, որ այդ նշանը կրելով հայոց արքա Տիգրան Մեծը դառնում էր ոչ միայն աստծո ընտրյալը կամ փոխանորդը, այլ հենց ինքն էլ աստված էր: Եվ դրա խորհուրդը ոչ միայն արքայական թագն էր այլ նրա անբողջ հանդերձանքը: Պատմաբան- դիցաբան Գոհար Վարդումյանը գրել է. «Արքայական իշխանության ամենավառ օրինակը գույնն է, թագավորական իշխանությունը խորհրդանշող (ծիրանի)՝ ծիրանագույն-ոսկի, թագավորական թիկնոցը կոչվում էր նաև «ծիրանի», իսկ նրա տերը կրում էր «Արև-արքա» տիտղոսը, այսինքն արևի գունային համապատասխանությունները արքայական թիկնոցի հետ ցույց են տալիս թագավորական խորհրդանիշների սերտ կապը լույսի խորհրդանիշին» (Вардумян, 2018):

Վանի թագավորության գերագույն աստվածը Խալդին էր: Խալդիի պաշտամունքը Մերձավոր Արևելքի աստվածությունների համագործընթացումն ուներ: Խալդիի պաշտամունքը բազմաբևեռ իրականության արդյունք էր: Ե. Գրեկյանը գրում է. «Խալդիի պաշտամունքը կապվում էր ժայռերի հետ, ակնհայտ է, որ նա լեռ-աստված էր, գուցեն՝ ժայռածին հերոս: Բավական է միայն հիշել ժայռերին բացված «Խալդյան դռներ»-ը (Գրեկյան, Բաղայան, Տիրացյան, Պետրոսյան, 2018): Այնուհետև նա շարունակում է. «Խալդին, միաժամանակ, արևային աստվածություն էր կամ պարզապես արև, Խալդիի պաշտամունքում ակնհայտ մեծ դեր ուներ նաև կրակը, Նրա՝ արևային աստվածություն լինելու մասին է վկայում նաև հետագայում տեղ գտած Վանի թագավորության Խալդի, իրանական-Միթրա, հայկական-Միհր (երկնային լույսի և արևի աստվածություն) անցումը» (Գրեկյան, Բաղայան, Տիրացյան, Պետրոսյան, 2018):



Նկար 1



Նկար 2

Գրություններ	Նշան	Նշանի նկարագրված	Ընդարձակ նշան	Նշանի նկարագրված	Նշանի նկարագրված	Նշանի նկարագրված
A	⊕	⊕	⊕	⊕	⊕	⊕
B	⊖	⊖	⊖	⊖	⊖	⊖
C	⊗	⊗	⊗	⊗	⊗	⊗
D	⊘	⊘	⊘	⊘	⊘	⊘
E	⊙	⊙	⊙	⊙	⊙	⊙
F	⊚	⊚	⊚	⊚	⊚	⊚
G	⊛	⊛	⊛	⊛	⊛	⊛
H	⊜	⊜	⊜	⊜	⊜	⊜
I	⊝	⊝	⊝	⊝	⊝	⊝
J	⊞	⊞	⊞	⊞	⊞	⊞
K	⊠	⊠	⊠	⊠	⊠	⊠
L	⊡	⊡	⊡	⊡	⊡	⊡
M	⊣	⊣	⊣	⊣	⊣	⊣
N	⊤	⊤	⊤	⊤	⊤	⊤
O	⊥	⊥	⊥	⊥	⊥	⊥
P	⊦	⊦	⊦	⊦	⊦	⊦
Q	⊧	⊧	⊧	⊧	⊧	⊧
R	⊨	⊨	⊨	⊨	⊨	⊨
S	⊩	⊩	⊩	⊩	⊩	⊩
T	⊪	⊪	⊪	⊪	⊪	⊪
U	⊫	⊫	⊫	⊫	⊫	⊫
V	⊬	⊬	⊬	⊬	⊬	⊬
W	⊭	⊭	⊭	⊭	⊭	⊭
X	⊮	⊮	⊮	⊮	⊮	⊮
Y	⊯	⊯	⊯	⊯	⊯	⊯
Z	⊰	⊰	⊰	⊰	⊰	⊰

Նկար 3

Իրենց իշխանությունը պաշտամունքային առումով ավելի ամրապնդելու նպատակով, Վանի թագավորության արքաները աստվածացվում էին, և այդ արքաների պաշտամունքն իրագործվում

³ Վանի թագավորության աստվածների գերագուն եռյակը (Խալդի, Թեյշեբա, Շիվինի) կրում է այդ խորհրդանիշը՝ որպես աստծո և իրավունքի խորհուրդ:

Էր Խալդիի տաճարում: Այդ է վկայում Ռուսա Ա-ի երկլեզվյա արձանագրությունը, որում պատմվում է, թե ինչպես Մուսասիրի արքա և Խալդի տաճարի քրմապետ Ուրգանան զոհեր է մատուցել թե՛ աստվածների և թե՛ Ռուսայի առջև. «Ուրգանան աստվածների արջև, աստվածների տաճարում, իմ առջև զոհեր մատուցեց» (Հմայակյան, 1990): Սարգոն II-ի արձանագրություններից մեկում պարզ նկարագրված է. «Խալդիի առջև, նրա աստծո, նրան օծում են տիրակալության խույրով և իշխանական թիկնոցով, նրան տալիս են կրելու Վանի թագավորության թագավորական գայիսոնը, իսկ նրա մարդիկ բարձրաձայն գոչում են նրա անունը»: Այս արձանագրությունում տրվում է գահակալության արարողակարգի մոտավոր նկարագրությունը: Խույրի և գայիսոնի հանձնումը խորհրդանշում էին նաև հոգևոր իշխանություն, իսկ թիկնոցը աշխարհիկ իշխանության խորհրդանիշ էր, որոնք ստանձնելով՝ Վանի թագավորության արքան դառնում է ժողովրդի առաջնորդն ու Խալդիի հովանավորյալը (Հակոբյան, 2020): Թագավորները իրենց տիտղոսներն անգամ Խալդիով էին բացատրում: Գ.Ղափանցյանը վերծանել է մի արձանագրություն, որտեղ այսպես է ներկայացված. «Խալդյան մեծությանը Մենուան Իշպուլինի որդին, հզոր թագավոր և մեծ թագավոր և թագավոր թագավորների... իշխանը Տուշպա քաղաքի»: Երբեմն էլ հանդիպում են հետևյալ բնույթի դարձվածքներ. «Խալդին ինձ թագավորություն տվեց, ստանձնեցի հայրական թագավորությունը (հոր տեղ իշխանությունը)», կամ «Խալդին ինձ գահի վրա նստեցրեց»: Եվ ըստ այդմ Խալդին ընկալվում էր նաև որպես արքա և հաճախ պատկերվում էր գահին նստած: (Ղափանցյան, 2018, Պողոսյան, 2018): Ասորեստանյան մեկ այլ արձանագրությանը Սարգոն արքան հիշատակել է, որ Խալդի աստծո մեհյանը կողոպտելու ժամանակ այնտեղ տեսել է Արգիշտի Ա-ի արձանը, որը եղել է «թագադրված աստղով՝ աստվածության խույրով և օրհնող աջ ձեռքով» (Խաչատրյան, 1998): Մահացած արքայի արձանը աստվածության խույրով ներկայացնելու փաստը կարող է վկայել այն, որ արքային պաշտել են ոչ միայն որպես հողեղեն իշխանություն, այլև որպես աստվածային գորություն (Հայ ժողովրդի պատմություն, հ. I, 1971)⁴:

Վանի թագավորության անկումից հետո Աքեմենյանների տիրապետության շրջանում Խալդիի պաշտամունքը միաձուլվել է Միթրայի պաշտամունքի հետ: Խալդիի դարպասը Վանի

⁴ Սա հաստատում է նաև Տիգրան Մեծի, Արտավազդ Բ-ի, Անտիոքոս Ա Երվանդունու դրամների վրա առկա «աստված» տիտղոսը:

թագավորության հետնորդների համար դառնում է «Մհերի դուռը» (Բաղայան, 2013)⁵, որը և կապված է «Սասնա ծռեր» էպոսի Փոքր Մհերի անվան հետ (Վարդումյան, Թոխաթյան, 2002)⁶:



Նկար 4

Խալդի Աստծո քանդակի վրա եղած խորհրդանշանական աստղի պատկերը (նկ. 4), ժառանգականության սկզբունքով, Հայկական լեռնաշխարհում ստացել է ինստիտուցիոնալ ինքնության իրավունք: Խալդի Աստծուց փոխանցվել է Միհրի աստվածությանը և իր դրսևորումը ստացել Երվանդունիների մոտ, անցել Կոմմագենեի, Ծոփքի թագավորներին և ամենացայտուն դրսևորումը ունեցել Արտաշեսյան Տիգրան Մեծի մոտ՝ նրա և Արտավազդի թագերի վրա հանդես գալով ութաթև աստղի պատկերով:

Ժ.Խաչատրյանը գրում է. «Խալդի աստծո դերը հետարարատյան թագավորության Հայաստանում ստանձնել է Միհրը: Կարելի է ենթադրել, որ և՛ Երվանդունիներին, և՛ Արտաշեսյաններին, և՛ Արշակունիներին Միհրն է թագավորություն տվել: Միհրն արքայից արքայի տարագով է, գլխի շուրջը ճառագայթաձև պսակով, ինչպես Կոմմագենեում, որը նրա տարբերիչ հատկանիշն է» (Խաչատրյան, 1998):

Հարկ է նշել, որ Տիգրան Մեծը դրամների վրա պատկերված է կիսադեմով, դասական արվեստի ռեալիստական ոճով, երիտասարդ դիմագծերով, Արևելքի հելլենիստական միապետների նման՝ անհիված երեսով, բայց գլխին այնպիսի թագով, որի նմանը չկար իր ժամանակի և ոչ մի վեհապետի մոտ՝ ո՛չ Արևելքում և ո՛չ էլ Արևմուտքում, բացառյալ Տիգրանին ենթակա Կոմմագենեի արքայի թագը: Այդ թագը վերևում ավարտվում է ճառագայթաձև ելուստներով, իսկ ներքևից՝ երկար, մինչև ուսերը հասնող ականջակալներով ու վզկալով, ընդ որում ճակատային մասում թագի վրայից կապված է արքայական ժապավենը (Հայ ժողովրդի պատմություն, հատոր 1, 1971): Կենտրոնը զարդարված է ութաթև աստղով, որը խորհրդանշում է արևը՝ հավերժությունը, նրա աջ և ձախ

⁵ Մհերի դռան վրա կրկնվող արձանագրությունում հիշատակվում են Վանի թագավորության աստվածների, ցուցակը և նրանցից յուրաքանչյուրին մատուցվելիք զոհերի քանակը:

⁶ Առավել ցայտուն է արտահայտված Փոքր Մհերի արևային էությունը, որ էպոս մտած Միհր արեգակն է: Նա աստվածամարտիկ է՝ արդարության, ճշմարտության, փրկության գաղափարակիր՝ արևի հանգրվան քարածայռում փակված:

կողմերում մեկական արժիվներ են, որոնք պոչով հենված են աստղի հիմքին և գլխով շրջված դեպի արևը: Արժիվներն այստեղ ուժի և իմաստության խորհրդանիշն է (նկ 5) (Տիգրան Հայազն, 2005): Տիգրան Մեծի թագին անդրադարձել է Գ.Ա. Տիրացյանը: Նա ներկայացրել է Արտաշեսյան հարստության արքաների թագը, տվել նկարագրությունը, անդրադարձել ծագումնաբանությանը (Тирацян, 1982): Պատմաբան-հնագետը համեմատական վերլուծությամբ հիմնավորել է, որ թագի այդ ձևը նմանություն ունի Աքեմենյան տիրակալների թագի հետ և եզրակացրել, որ եթե անգամ ժամանակի ընթացքում պարզվի, որ հայկական թագի հայտնվելը և ձևավորվելը վերաբերում է մ.թ.ա. առաջին դարին և եղել է հենց Տիգրան երկրորդի գործը, միևնույնն է իրականացվել է մեծապետական քաղաքականություն արդյունքում՝ հիմնվելով արեմենյան մոտեցման վրա, որպես իր քաղաքական նախորդների (պարսիկներից փոխառած «արքայից արքա» տիտղոսը, տոհմական Օրոնտես անվան պահպանումը), չի բացառվում հայկական թագի արեմենյան ծագման ենթադրությունը (Тирацян, 1982):

Մեր համոզմամբ արժիվ առկայությունը Աքեմենյան արքաների զինանշանի կամ Դարեհ I-ի թագի ժապավենի վրա չի փաստում Տիգրան Մեծի թագի վրա այդ խորհրդանիշի արեմենյան ծագման մասին: Աքեմենյան արժիվների գոյությունը որևէ առնչություն չունի Հայոց արքա Տիգրան Մեծի թագի հետ, մանավանդ որ արժիվը որպես աստվածության և արքայական իշխանության խորհրդանիշ տարածված է եղել Հին Աշխարհի գրեթե բոլոր ժողովուրդների մշակույթներում:

Ի հավաստումն վերը նշվածի Բ.Թաշճեանը գրել է. «Մեծն Տիգրանի թագին նախնական ձևը նման է Տրիպազի, Շաւարշի և «Չարեհ»-ի խոյրերուն, որոնց զարգացումով կազմուած է Չարեհի երկայն թագը. ասոր քիչ մը կարճ ձեւն է Տիգրանինը. վերջնոյս թագը անփոփոխ մնաց հայ թագաւորաց մօտ մինչև Տրդատ Մեծ. Արևմտահայաստանի դրամներուն գլխաւոր խորհրդանիշն էր միագլուխ արծիւը. թէև կը տեսնենք բազէ, ձի, ձիաւոր, ձիու սանտրուած գլուխ, պեկաս, Անահիտը, Աստղիկը, Արամազդը և Վահագնը» (Թաշճեան, 1950):



Նկար 5

Յ.Ստեփանեանը իր «Հայկական դրոշակներ և զինանշաններ» գրքում գրել է. «Հայկական դրամներու վրայ կը գտնենք Մեծն Տիգրանի նկարը, թագակիր գլխով: Թագի վրայ կ'երեւին երկու արծիւներ կանգնած դէմ դիմաց, գլուխները վեր բռնած դէպի ութանկիւն աստղը մը, որը հաւանաբար արեգակին մէկ աղօտ պատկերն է: Այդ ժամանակ արեգակը մեր ժողովուրդի կողմէն սիրուած ու պաշտուած էր: Պարսիկներն ալ նման նշաններ ունէին: Պոմպէի մեջ գտնուած խճանկարի մը վրայ՝ Դարեհ թագաւորի օրով՝ «ծիրանագոյն վառ՝ ոսկի նշանով» կը յիշատակուի» (Ստեփանեան, 1966): Միխիթարյան միաբանության անդամ Հայր Վարդան վարդապետ Հացունու

մոտ էլ հանդիպում ենք հետևյալին. «Պարթևաց թագին վրայ քանդակուած կը տեսնենք ճիշդ Տիգրանի աստղը, որ Ասորեստանեայց քով ալ աստուածոց թագերուն վերև գետեղուած էր իբր անոնց յատուկ նշան» (Հայր Վարդան Վարդապետ Հացունի, 1923): Հացունին իր ուսումնասիրությունների արդյունքում հանգել է մեզ համար թերևս ամենակարևոր եզրակացությանը. «Իրականն այս է՝ թէ սույն թագը կ'երևի նախ Մեծին Տիգրանի և անոր սերընդոց բոլոր դրամոց վրայ, և այս փարումն այդ ձևին՝ խորհիլ կու տայ ինձ, թե կրնայ նոյն իսկ Տիգրանի գիւտը լինել, և իւր նախորդները կրած լինին ցեղակից պարթև Արշակունեաց գմբեթարդ խոյրը, զոր անոնց մէկ ճիւղը նախանձայուզութեամբ տարաւ նաև Եդեսիոյ գահի վրայ...» (Հայր Վարդան Վարդապետ Հացունի, 1923):

Այժմ փորձենք մի քանի օրինակով ևս հաստատել Տիգրան Մեծի թագի ժառանգական կապը իր նախնիների և հաջորդների հետ՝ չմոռանալով նշել, որ միայն Տիգրանի թագի վրա է պատկերված ութաթև աստղ՝ երկու կողմում արծիվներով:

Թագի ժառանգորդություն

Նախնիների և թագավորների պաշտամունքի ավանդույթները շարունակական բնույթ են կրում նաև հետարարատյան թագավորության շրջանում: Փոքր Հայքի մաս Կոմմագենեն (Գամիիրք) և Հայաստանը դարեր շարունակ լինելով սերտ փոխհարաբերությունների մեջ, միմյանց հետ ժառանգական շատ ընդհանրություններ ունեն և այն ավելի ցցուն տեսնում ենք նրանց գործածած հայկական թագի պատկերներում: Ըստ Անտիոքոս Ա-ի (մ.թ.ա. 69-34 թթ.) հունարեն արձանագրության, նրա նախնի Երվանդունի Արսամես-Արշամը (մ.թ.ա. 3-րդ դ. երրորդ քառորդ) կառուցել է Արսամեան, որտեղ Անտիոքոսի հայրը՝ Միհրդատ Կալինիկոսը դամբարան-սրբավայր է հիմնադրել, իսկ Անտիոքոսը մեծացրել ու բարեկարգել է այն՝ վերածելով հոր և որդու համատեղ պաշտամունքի վայրի, որը հարուստ է բարձրաքանդակ կոթողներով և արձանագրություններով (նկ. 6): Բարձրաքանդակ մեծ կոթողները ամրացված են եղել ժայռի մեջ փորված խորշերում: Դրանց բեկորների վրա պատկերված են Միհրը և վերջինիս հայրը՝ Միհրդատ Կալինիկոսը: Կանաև մի ամբողջական կոթող, որի վրա պատկերված են Միհրդատը և Հերակլեսը միմյանց ձեռք սեղմելիս (նկ.7) (Խաչատրյան, 1998): Կոմմագենեի Նեմրոթ լեռը արևապաշտության սրբավայր էր, որտեղ բացի Արամագդից, Վահագնից, Միհրից, Անտիոքոսից ներկայացված են նաև արքայական իշխանության խորհրդանիշ առյուծի և արծիվի վեհաշուք արձաները 50 մ. Բարձրությամբ (Վարդունյան Գ., 2015):

Համաձայն Է. Բաբելոնի՝ Անտիոքոս Թեոսը «Կոմմագենեում և Միջագետքում» հաջորդել է Տիգրան Մեծին, կրում է նույն տիարան, ինչպես «Տիգրան Մեծի անմիջական հաջորդները Հայաստանում» (Դումիկյան, 2015):

Կոմմագենեի Անտիոքոս Ա-ն դրամների դիմերեսին ներկայացված է որպես թագակիր արքա: Դրանք նման են Տիգրան Մեծի դրամներին: Ռ.Սուլլիվանը եզրակացրել է. որ Անտիոքոս Ա

Երվանդյան հայի գահակալությունը հավասարապես ճանաչվել է հայերի, հույների, պարթևների և Հռոմի կողմից: Սա համապատասխանում է իրականությանը: Կոմմագենեի տիրոջ դրամները ցուցանում են, թե նրա հաջորդականությունը Փոքր Հայքի գահի վրա թե՛ իր երկրի քաղաքական անկախությունը, որը շարունակվել է մոտ մեկ դար (նկ. 8) (Nercessian, 1984, Sullivan, 1973):



Նկար 6



Նկար 7



Նկար 8

Ատրպետը նկատել է, որ Ծոփքի թագավոր Չարեհի (մ.թ.ա. 190 -175 թթ.) դրամի դիմերեսի պատկերը իր ձևով նման է Տրիբազի և Միհրանի դրամներին, որին հետևել են Տիգրան Մեծի և հետնորդների

1912):
Տիգրան Մեծի
վրա արքայի թագի
երկու արծիվների միջև)
աջ բարձրացող
որպես Հալլեի գիսաստղի
ամիսներին երևացել է Հայաստանի երկնականարում (նկ.9) (Վարդանյան Ռ., Մուղայան Գ., Վարդանյան Ա., և այլք, 2018):



դրամների քանդակագործները (Ատրպետ, դրամների մեջ առանձնանում է մի խումբ, որի ընդունված պատկերախմբի (ութաթև աստղը փոխարեն հանդիպում է միայն աստղը՝ դեպի հետագծով, ինչն էլ առաջարկվել է մեկնաբանել պատկեր, որը մ.թ.ա. 87 թ. հուլիս-օգոստոս

Նկար 9

Կլաուս Շմիդտը Պորտաբուր (Գյոթեկլի-թեփե) կոչված հնավայրում, որը որպես հնագույն է դիտարկել, կենդանական պատկերաշարերում մատնանշել է արծվի հարթաքանդակ, իսկ արձանախմբերից մեկում՝ արծվի կլոր քանդակ (Schmidt, 2010): Բաննինգը, ըստ Հաուպտմանի, գրել է որ կան նաև հորիզոնական ճառագայթներ (վարդյակներ) (Banning, 2011): Նեմրութ լեռան սրբավայրում առկա են առանձին արծվի քանդակներ և ութաթև աստղ (առյուծի (Վարդումյան, Թոխաթյան, 2002)⁷ հարթաքանդակի վրա) (նկ. 10) (Juan Antonio Belmonte and César González García, 2010):

Նկար 10

Տիգրան Մեծի հայկական թագը

1. Ժայռապատկերները, լինելով պատմամշակութային սկզբնաղբյուր, իրականացնում են ճանաչողական, փաստագրական ու փոխանցման գործառույթ: Դրանք, պատմում են մարդու վաղնջական անցյալի կյանքի ու հավատալիքների մասին: Հայոց մեջ դրանց անբաժան մասն են կազմել արծիվը և ութաթև աստղը (կամ արև): Այսինքն պնդում ենք, որ դրանք էթնիկական ծագմամբ պատկանել են Հայկական լեռնաշխարհի բազմահազարամյա պատմությունն ունեցող բնակիչներին՝ հայերին: Այս դեպքում լինելով հային բնորոշ հարազատ, ավանդական տարածաժամանակային առումով դարձել են նաև մենաշնորհային հայի ստեղծագործական

⁷ Հայ բանահյուսությունը հարուստ է լույս-արեգակի նշանակության բարձրարժեք դրսևորումներով, գործինակ մի ավանդություն ըստ որի «Արևը նստած է առյուծի մեջքին, սլանում է երկրակամարի վրայով և երեկոյան գնում հանգստանալու մոր գրկում առյուծը իր վիթխարի թրով պաշտպանում է նրան քաջքերից»:



միտք, հավատ, շունչ ու ոգի և սփռվել Հին Աշխարհում, վերածնունդ ապրելով նաև միջին, նոր և նորագույն ժամանակներում:

2. Արծիվը որպես աստվածության խորհրդանիշ տարածված է եղել հին աշխարհի գրեթե բոլոր մշակույթներում (Իսպանիայից մինչև Հնդկաստան արծվի պատկերը օգտագործվել է որպես խորհրդանշան՝ նաև

պետական խորհրդանիշ): Այն աստվածների սուրհանդակն էր և համարվում էր արքայական թռչուն: Կարևոր է հիշել, որ դեռևս Էրեբունիի քաղաքային դամբարանից հայտնաբերված արծաթե ռիտոնի հեծյալի, մեդական տիպի գլխարկի աջ ու ձախ կողմերին հերալդիկ դիրքով ինչպես Տիգրան Մեծի թագի վրա է պատկերված, կան թևերը բացած արծվի պատկերներ (մ. թ. ա. IV դ. առաջին կես): Արծիվը որպես զինանշան է ծառայել նաև Երվանդունիներին, որոնցից այն ժառանգել են Արտաշեսյաները (Իսաչատրյան Ժ., 2003)⁸:

3. Արեգակը ինչպես հայերի, այնպես է պարսիկների ու մի շարք այլ ժողովուրդների մոտ սիրված ու պաշտված է եղել որպես աստվածություն (հայկական Միհր, պարսկական Միթրա, հնդկական Ագնի): Բացի այդ հայոց նախաքրիստոնեական մշակույթում շատ ենք հանդիպում 5-6-8 ճառագայթաթև աստղերի պատկերների (Վանի թագավորության որմնանկարները վառ օրինակ) որոնք գործածվել են որպես գաղափարագրեր և ունեցել են Աստված, արքայական իշխանություն կամ Արարիչ Աստծո հանձնակատար, իմաստը:

4. Այս խորհրդանիշերը, մարդկային մտածողության աստիճանական զարգացմանը զուգահեռ, անցել են պատմության ճանապարհ, ենթարկվել ո՛չ միայն ձևային, այլ նաև իմաստային փոփոխության՝ արտացոլելով հայ ժողովրդի հոգևոր և աշխարհիկ իշխանության բացարձակ միասնությունը: Այդ խորհրդանիշերից արծիվը հետագայում անցել է Արծրունիների զինանշանին Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու պատին, Սյունիքի թագավորական տան զինանշանին (արծիվը պատկերված է բաց թևերով պոչի վրա հենված) և այլ տոհմերի զինանշաններին, իսկ մեր օրերում՝ Հայաստանի Հանրապետության զինանշանին: Գանձասարի Ս. Հովհաննես եկեղեցում (13-րդ դարի կես) առկա են ինչպես արծիվներ, այնպես էլ աստղ: Ըստ այդմ կարող ենք ասել, որ այդ խորհրդանիշերը լինելով համամարդկային պատմության և մշակույթի ակունքներում ունեն իրենց հայկական ինքնուրույն դրսևորումները՝ Հայոց Տիգրան Մեծի թագի օրինակով:

⁸ Արծվի առկայության և նրա տարբեր դրսևորումների մասին հայկական մշակույթում և արվեստում մինչ Տիգրան Մեծի թագի վրա ցցուն կերպով ներկայացվելը ավելի մանրամասն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Պատմությանը և մշակույթին հայտնի արժվի և ութաթև աստղի խորհրդանշանները մեր նախնիների պատկերացումների մի մասն են: Սկսած ժայռապատկերներից, Վանի թագավորության աստվածություններից, նախամաշտոցյան գրային համակարգից դրանք ժառանգականության սկզբունքով Հայկական լեռնաշխարհում ստացել են ինստիտուցիոնալ (կանոնակարգված) ինքնության իրավունք: Խալդի Աստուց փոխանցվել են Միհրի աստվածությանը և իրենց դրսևորումը գտել Երվանդունիների մոտ (Երվանդ Ա-ի ոսկեդրամի հակառակ երեսի արձիվը): Կոմմագենեի Նեմրոթ լեռան սրբավայրը այդ խորհրդանշանների ժառանգորդության և փոխանցման լավագույն դրսևորումներից է: Այն արևապաշտության սրբավայր է, որտեղ բացի Արամազդի, Վահագնի, Միհրի, Տիրի, Կոմմագենեի Անտիոքոսից բացի ներկայացված են նաև արքայական իշխանության խորհրդանիշեր առյուծի (գարդարված աստղանշանով) և արժվի վեհաշուք արձանները 5 և ավելի մ. բարձրությամբ: Այնուհետև դրանք անցել են Ծոփքի թագավորներին (նրանց հատած դրամների վրայի աստղը) և ամենացայտուն դրսևորումը ունեցել Արտաշեսյան Տիգրան Մեծի թագի վրա (նրա և Արտավազդի թագերի վրա հանդես գալով բացարձակ ութաթև աստղի պատկերով՝ երկու արձիվների միջև):

2. Տիգրան Մեծի թագի վրա պատկերված այս խորհրդանիշերը հասարակական մտածողության մեջ ձևավորել են հոգևոր և աշխարհիկ իշխանության բացարձակ միասնությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Ատրպետ,** (1912). Հայ թագաւորների դրամները. Յետ Ադեքսանդրեան շրջան, Ազգագրական հանդես, գիրք XXIII, Թիֆլիս, Ն.Աղայանցի, 2.
- Բաղայան Մ.,** (2013). Ուրարտական սեպագիր արձանագրություններով ժայռափոր դռները (խորշեր), Հայաստանի մայրաքաղաքներ, գիրք I, Վան, «Վան քաղաքի առաջին հիշատակության 2865-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի (7-9 հոկտեմբերի, 2010 թ.) նյութերի ժողովածու», Երևան, ՀՀ ԳԱԱ Գիտություն.
- Գրեկյան Ե., Բաղայան Մ., Տիրացյան Ն., Պետրոսյան Ա.,** (2018). Բիայնիլի- Ուրարտու/ աստվածներ, տանարներ, պաշտամունք/, Երևան, «ՀԱԻ»
- Դումիկյան Ա.Վ.,** (2015). Կոմմագենեի դրամներում հայկական թագի մեկնությունների հարցը ֆրանսիական պատմագրության մեջ, Լրաբեր Հասարակական գիտությունների, Երևան, «ՀՀ ԳԱԱ», գիրք 3, (3).
- Թաշճեան Բ.,** (1950). Արշակունի Հայաստանի հազարամեայ փառքը, Գահիրե, Նոր-Աստղ.
- Թոխաթյան Կ.,** (2015). Երկնային լուսատուներն ու երևույթները Հայաստանի ժայռապատկերներում /Ծովի մշակույթը մարդկության մշակույթն է

քաղաքակրթությունների երկխոսությունում/, «ԱՅԱՍ» ծովային հետազոտությունների ակումբ, միջազգային գիտաժողովի հիմնադրությունը», Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

Խաչատրյան Ժ., (2003). Արժվի տարբեր հորինվածքներով կնքադրոշմներ, գեմաներ և քանդակներ, *Պատմա-բանասիրական հանդես*, (2). Երևան, ՀՀ ԳԱԱ.

Խաչատրյան Ժ.Գ., (1998). Ուրարտա-հայկական պաշտամունքային առնչություններ, «Բանբեր Երևանի համալսարանի, հասարակական գիտություններ», 3 (96), Երևան, ԵՊՀ.

Հակոբյան Հ., (2020). Հոգևոր և աշխարհիկիշխանությունների փոխհարաբերությունները Վանի (Արարատ-Ուրարտու) թագավորությունում, «պատմություն և քաղաքականություն գիտական հանդես, 1(6).Երևան, Տիր.

Հայ ժողովրդի պատմություն, հատոր I, (1971) Երևան, «Հայկական ՍՍՀ ԳԱ»:

Հայր Վարդան Վարդապետ Հացունի, (1919). Հայ դրոշները պատմութեան մէջ, Վենետիկ «Ս. Ղազար», ՌՅԿԸ.

Հայր Վարդան Վարդապետ Հացունի, (1923). Պատմութիւն հին հայ տարագին, պատկերագարդ, Վենետիկ, Ս. Ղազար.

Հմայակյան, (1990). Վանի թագավորության պետական կրոնը, Երևան, Հայաստանի ԳԱ.

Հովհաննիսյան Կ., (1973). Էրեբունիի որմնանկարները, Երևան, ՀՍՍՀ ԳԱ:

Ղափանցյան Գ., (1940). *Ուրարտուի պատմությունը*, ԵՊՀ.

Մարտիրոսյան Հ., Իսրայելյան Հ., (1971). Գեղամա լեռների ժայռապատկերները, Հայաստանի հնագիտական հուշարձանները, 6, Ժայռապատկերներ, Պրակ II, Երևան, Հայաստանի ԳԱ.

Մովսիսյան Ա., (2021). Հայաստանի նախամաշտոցյան գրավոր մշակույթի պատմություն, Երևան, Չանգակ.

Պողոսյան Գ., (2018). Չինավառ Խալդիի կերպարը ըստ սեպագիր արձանագրությունների, «Կանթեղ գիտական հոդվածների ժողովածու», Երևան, «ՀՀ ԳԱԱ, 2 (72).

Պողոսյան Գ., (2018). Թեյշեբախնիի սկավառակաձև որմնագարդի հորինվածքային կառուցվածքն ու խորհրդարանությունը, Գեղարվեստի ակադեմիայի տարեգիրք (արվեստագիտական և հումանիտար հետազոտություններ), Երևան, «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա, (6).

Ստեփանեան Յ., (1966). Հայկական դրոշակներ եւ գինանշաններ, Պէյրութ, Սեւան.

Վարդանյան Ռ., Մուղալյան Գ., Վարդանյան Ա., և այլք, (2018). Հայաստանի դրամաշրջանառության պատմություն, Երևան, ՀՀ կենտրոնական բանկ.

Վարդունյան Գ., (2015). Տիեզերքը և հայ դիցաբանությունը, Աստղագիտության կապն այլ գիտությունների, մշակույթի և հասարակության հետ. «Հայկական աստղագիտական

ընկերություն XIII տարեկան համաժողով 7-10 հոկտեմբեր, 2014 Բյուրականի աստղադիտարան» Երևան, ՀՀ ԳԱԱ, Գիտություն.

Վարդումեան Գ., Թոխաթեան Կ., (2002). Հայոց լուսարեւային պատկերացումները. ըստ ժայռապատկերների և ազգագրական նիւթերի, «Բազմավէպ», Վենետիկ, Ս. Ղազար, 1(4).

Տիգրան Հայազն, (2005). Հայկական իշխանական զինանշանները, գիրք առաջին, Երևան, Հեղինակային հրատ.

Вардумян Г., (2018). Представления о свете и солнце в мифо-эпическом творчестве и обрядовой жизни армян, Բանբեր, Երևան, Լինգվա, 1(44).

Тирацян Г. А., (1982). Армянская тиара: опыт культурно-исторической интерпретации. *Вестник древней истории*, Академия наук СССР, Институт всеобщей истории, Москва, Наука.

Banning E.B., (2011) Göbekli Tepe and the Identification of Temples in the Pre-Pottery Neolithic of the Near East, The University of Chicago Press, Current, Anthropology, 5(52).

Juan Antonio Belmonte and César González García (2010). Antiochos's hierothesion at Nemrud Dag revisited: Adjusting the date in the light of astronomical evidence, Instituto de Astrofísica de Canarias and Universidad de La Laguna.

Nercessian E.T., (1984). Armenian numismatic bibliography and literature, Armenian numismatic society, Los Angeles.

Schmidt K., (2010). Göbekli Tepe-the Stone Age Sanctuaries. New results of ongoing excavations with a special focus on sculptures and high reliefs, (37).

Sullivan R.D., (1973). Diadochic coinage in Commagene after Tigranes the Great, by R. D. Sullivan. Numismatic chronicle, 7(8).

REFERENCE LIST

Атрепет, (1912). Monety armyanskikh carej. I vse zhe Ageksandrijskij rajon (*Coins of Armenian kings. And yet the Aghexandria region*), Etnograficheskij zhurnal, kniga XXIII, Tiflis, N. Agayanci, 2.

Badalyan M., (2013): Vysechennye v kamne dveri (nishi) s urartskimi klinopisnymi nadpisyami, Stolicy Armenii (*Stone-carved doors (niches) with Urartian cuneiform inscriptions, Capitals of Armenia*), kniga I, Van, «Sbornik materialov mezhdunarodnoj konferencii, posvyashchennoj 2865-letiyu pervogo prazdnovaniya goroda Vana (7-9 oktyabrya 2010 g.)»), Erevan, NAN RA.

- Grekyan E., Badalyan M., Tiracyan N., Petrosyan A.,** (2018). Biainili- Urartu bogi, hramy, poklonenie (*Biainili-Urartu/ gods, temples, worship*), Erevan, "GAI"
- Dumikyan A.V.,** (2015). Vopros traktovok armyanskoj korony v kommagenskih dramah vo francuzskoj istoriografii (*The question of the interpretation of the Armenian crown in Commagene dramas in French historiography*), ZHurnal social'nyh nauk, Erevan, «Armyanskaya nacional'naya akademiya nauk», kniga 3, (3).
- Tashdzhyan B.,** (1950). Tysyacheletnyaya slava Armenii Arshakuna (*The Thousand-Year Glory of Armenia Arshakun*), Kair, Nor-Asth.
- Tohatyan K.,** (2015): Nebesnye svetila i yavleniya v armyanskih petroglifah (*Celestial bodies and phenomena in Armenian petroglyphs*). Kul'tura morya – kul'tura chelovechestva v dialoge civilizacij/, Klub morskikh issledovanij «AYAS», Materialy mezhdunarodnoj konferencii, Erevan, Institut istorii Nacional'noj akademii nauk Armenii.
- Hachatryan ZH.,** (2003). Pechati, gemmy i skul'ptury s razlichnymi kompoziciyami oral (*Seals, gems and sculptures with various eagle compositions*), Istoriko-filosofskij zhurnal, (2). Erevan, NAN RA:
- Hachatryan ZH.D.,** (1998). Urartsko-armyanskie religioznye otnosheniya (*Urartian-Armenian religious relations*), «Stat'i Erevanskogo universiteta, Obshchestvennye nauki», 3 (96), Erevan, EGU.
- Akopyan G.,** (2020): Vzaimootnosheniya duhovnoj i svetskoj vlasti v Vanskom carstve (*Relationships between spiritual and secular authorities in the Kingdom of Van*) (Ararat-Urartu), «Istoriko-politicheskij nauchnyj zhurnal», 1(6). Erevan, Tir.
- Istoriya armyanskogo naroda, (History of the Armenian people). Tom I, (1971) Erevan, «GA Armyanskoj SSR».*
- Otec Vardan Vardapet Hacuni,** (1919). Armyanskie flagi v istorii (*Armenian flags in history*), Veneciya «Sv. Lazar'», RIK.
- Otec Vardan Vardapet Hacuni,** (1923). Istoriya drevnearmyanskogo kostyuma, illyustrirovannaya (*History of ancient Armenian costume, illustrated,*). Veneciya, Sankt-Peterburg. Lazar:
- Amayakyan,** (1990): Gosudarstvennaya religiya Vanskogo carstva (*State religion of the Van Kingdom*), Erevan, Armeniya.
- Oganesyan K.,** (1973): Freski Erebuni (*Frescoes of Erebuni*).Erevan, SSSR.
- G. Kapancyan, (1940). Istoriya Urartu, EGU.
- Martirosyan G., Israelyan G.,** (1971). Naskal'nye risunki Gegamskih gor, Arheologicheskie pamyatniki Armenii, 6, Naskal'nye risunki, Prak II, Erevan, Armeniya.
- Movsisyan A.,** (2021): Istoriya domashtotinskoj pis'mennoj kul'tury Armenii (*History of pre-Shtoty written culture of Armenia*). Erevan, Zangak.

- Pogosyan G.**, (2018): Izobrazhenie Zinavara Haldi po klinopisnym nadpisyam (*Image of Zinawar Khaldi from cuneiform inscriptions*), «Sbornik nauchnyh statej Kantekha», Erevan, «Nacional'naya akademiya hudozhestv Armenii, 2 (72).
- Pogosyan G.**, (2018): Vymyshlennaya struktura i obosnovanie diskoobraznogo nastennogo ukrasheniya Tejshebaini (*Fictional structure and rationale for the Teishebaini disc-shaped wall decoration*). Ezhegodnik Akademii izyashchnyh iskusstv (hudozhestvenno-gumanitarnye nauki), Erevan, «Gosudarstvennaya akademiya izyashchnyh iskusstv Armenii», (6).
- YU. Stepanyan**, (1966). Armyanskije flagi i gerby (*Armenian flags and coats of arms*). Bejrut, Sevan.
- Vardanyan R., Mugalyan G., Vardanyan A. i dr.** (2018). Istoriya denezhnogo obrashcheniya Armenii (*History of monetary circulation in Armenia*), Erevan, Central'nyj bank Armenii.
- Vardumyan G.**, (2015). Vseleennaya i armyanskaya mifologiya, svyaz' astronomii s drugimi naukami, kul'turoj i obshchestvom (*The Universe and Armenian Mythology, the Connection of Astronomy with Other Sciences, Culture and Society*). «XIII ezhegodnaya konferenciya Armyanskogo astronomicheskogo obshchestva 7-10 oktyabrya 2014 g. Byurakanskaya observatoriya» Erevan, NAN RA, Nauka.
- Vardumyan G., Tohatyan K.**, (2002). Armyanskije idei sveta (*Armenian ideas of light*). Po naskal'nyh risunkam i etnograficheskim materialam «Bazmevop», Veneciya, Sankt-Peterburg. Lazarya, 1(4).
- Tigran Ayazn**, (2005)., Armyanskije carskie gerby, (*Armenian royal coats of arms*), kniga pervaya Erevan, Avtorskaya redakciya.
- Vardumyan G., (2018): Predstavleniya sveta i solnca v mifoepicheskom iskusstve i ritual'noj zhizni arмян (*Representations of Light and Sun in the Mytho-Epic Art and Ritual Life of Armenians*). Banber, Erevan, Lingva, 1(44).
- Tiracyan G. A.**, (1982). Armyanskaya tiara: kul'turno-istoricheskaya interpretaciya (*Armenian Tiara: Cultural and Historical Interpretation*). Vestnik drevnej istorii AN SSSR, Institut vseobshchej istorii, Moskva, Nauka.
- Banning E.B.**, (2011) Göbekli Tepe and the Identification of Temples in the Pre-Pottery Neolithic of the Near East, The University of Chicago Press, Current, Anthropology, 5(52).
- Juan Antonio Belmonte and César González García** (2010). Antiochos's hierothesion at Nemrud Dag revisited: Adjusting the date in the light of astronomical evidence, Instituto de Astrofísica de Canarias and Universidad de La Laguna.
- Nercessian E.T.**, (1984). Armenian numismatic bibliography and literature, Armenian numismatic society, Los Angeles.

Schmidt K., (2010). Göbekli Tepe-the Stone Age Sanctuaries. New results of ongoing excavations with a special focus on sculptures and high reliefs, (37).

Sullivan R.D., (1973). Diadochic coinage in Commagene after Tigranes the Great, by R. D. Sullivan. Numismatic chronicle, 7(8).

РЕЗЮМЕ

ИКОНОГРАФИЧЕСКИЕ ИСТОКИ «ТИАРЫ» ТИГРАНА ВЕЛИКОГО МАДОНА МАРТИРОСЯН

В древних системах мира главные лица – цари, правители – носили важный мистический отличительный элемент, в виде церемониальной короны. Они различались как по внешнему виду, так и по содержанию. Корона-диадема говорила о занимаемой носителем должности, достижениях, полученных титулах.

Корона-диадема имела не только смысл передачи родовой преемственности, но также духовную и светскую философскую природу. Такой была «Армянская корона» Тиграна Великого, царя Армении.

Объектом исследования является иконография армянской короны Тиграна Великого.

Цель исследования – показать, что армянская корона Тиграна Великого – это корона, изображенная на древних барельефах, скульптурах, монетах. Такую корону-диадему носили Тигран Великий и преемники цари Ервандуни родственной коммагенской ветви в торжественных условиях. Корона Тиграна Великого была создана на основе религиозно-культурной идеи отражения бога Михра.

Методологической основой исследования послужили аналитический, историко-сравнительный, хронологическо-описательный методы.

В результате исследования установлено, что иконографические истоки короны Тиграна Великого возникли из древних наскальных рисунков Армянского нагорья и, получив право институциональной идентичности, после определенного развития вошли в иконографию божеств Ванского царства (Халди, Тейшеба, Шивини). перешло к божеству Михри, царство Ерванда, царям Коммагены и Цопка к маштоцкому алфавиту и в их усовершенствованном варианте появились на коронах армянского царя Тиграна Великого, Артавазда и других арташесских царей. Сравнивая и обсуждая результаты исследований историков-исследователей Г.А.Тирацяна, Б.Ташдзяна, З.Хачатряна, Р.Салливана, отца Вардана Хацуна и других, мы пришли к выводу, что армянская корона Тиграна, имея первоначальное сходство с персидской короной, однако имеет армянское происхождение и был спроектирован и изготовлен согласно идеям, представлениям и

позиции его владельца Тиграна Великого. Это результат абсолютного переплетения духовной и светской власти многовековой истории армянского народа, о чем свидетельствует пример наскальных рисунков, надписей и памятников Армянского нагорья.

Ключевые слова. Тигран Великий, Антиох I, армянская корона, бог Халди, восьмиконечная звезда (солнце), наскальные рисунки, орел, святилище горы Немрут.

ABSTRACT

ICONOGRAPHIC ORIGINS OF " TIARA " OF TIGRAN THE GREAT

MADONA MARTIROSYAN

In the ancient systems of the world, the main persons-kings, rulers - carried an important philosophical distinguishing element, wore a ceremonial crown hats. They differed both in their appearance and content. crown-Khur told about the position of the wearer, achievements, titles received. Khuri-Crowns had not only the meaning of transmission of dynastic succession, but also had a spiritual and secular philosophical nature. Such was also the "Armenian Crown" of Tigran the Great, the king of Armenia.

The object of the study is the iconography of the Armenian crown of Tigran the Great. The purpose of this study is to The Armenian crown of Tigran the Great is the crown depicted in ancient high sculptures, sculptures, on carved stones and coins, which was worn by Tigran the Great, his successors and the Yervandun kings of the related Kommagenian branch in solemn circumstances. The crown of Tigran the Great was created on the basis of a religious idea. It is a reflection of the supposed subordinate of the god Mihr. It is of native Armenian origin and is not an imitation of any royal foreign khuri.

The methodological basis of the research was the analytical-comparative, historical-comparative, and chronological-descriptive methods.

As a result of the study, it was established that. The iconographic origins of Tigran the Great's crown originated from the ancient rock paintings in the Armenian highlands and, receiving the right of institutional identity, after undergoing certain polishing, entered the iconography of the deities of the Kingdom of Van (Khaldi, Teisheba, Shivini), passed to the deity Mihri, the kingdom of Yervandi, the kings of Commagene and Tsopk to the Mashtotsian alphabet and appeared in their improved version on the crowns of the Armenian king Tigran the Great, Artavazd and other Artashesian kings. By combining and discussing the results of the studies of historians-researchers G.A.Tiratsyan, B.Tashjian, Z.Khachatryan, R.Sullivan, Father Vardan Hatsun and others, we came to the conclusion that the Armenian Tigranyan crown, having an initial similarity with the Persian crown, however, it is of

Armenian origin and was drawn and prepared according to the ideas of its master, Tigran the Great, to perceptions in accordance with the position. It is the result of the absolute interweaving of the spiritual and secular authorities of the centuries-old history of the Armenian people, as evidenced by the example of rock paintings, inscriptions and monuments of the Armenian Highlands.

Key words: Tigran the Great, Antiochus I, Armenian crown, eagle, eight-pointed star (sun), God of Khaldi, rock paintings, sanctuary of Mount Nemrut.

Հոդվածը ստացվել է՝ 12.07. 2024

Հոդվածն ուղարկվել է գրախոսման՝ 17.07. 2024

Հոդվածը երաշխավորվել է տպագրության՝ 14.09.2024

**«ՄՇԱԿ» ԹԵՐԹԸ ՈՐՊԵՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԱՌՕՐԵԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ (ԵԼԻԶԱՎԵՏՊՈԼԻ ՆԱՀԱՆԳԻ ՂԱԶԱԽԻ
ԳԱՎԱՌԻ ՕՐԻՆԱԿՈՎ)**

ՎԼԱԳԻՄԻՐ ՊՈՂՈՍՅԱՆ

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ, ՀՀ

Էլ. հասցե՝ vladimir.pogosyan@ysu.am

DOI: 10.24234/scientific.v2i47.164

ԱՄՓՈՓՈՒՄ

XIX դարավերջին և XX դարասկզբին Ռուսական կայրության հասարակական-քաղաքական գործընթացներին զուգընթացը դիտարկելի են նաև առօրեական կերպափոխությունները և այս հոդվածում փորձել ենք ուսումնասիրել Ելիզավետայոյի նահանգի Ղազախի գավառի հայության ինքնակառավարման առօրեականությունը՝ որպես սկզբնաղբյուր օգտագործելով «Մշակ» թերթում առկա տեղեկությունները:

«Մշակ»-ը այս ժամանակահատվածի ամենահեղինակավոր և տարածված մամուլի միջոցն էր, որի շնորհիվ կովկասահայությունը փորձում էր ոչ միայն ստանալ տեղեկատվություն, այլև մամուլի միջոցով հաղորդել իր ձեռքբերումների և կարևոր իրադարձությունների մասին: «Մշակ»-ը հանդիսանում էր գավառահայության ձայնը և նրա համարներում տպագրված գավառական նամականիին և անդրադարձներն ունեն աղբյուրագիտական նշանակություն տվյալ ժամանակահատվածի կովկասահայության առօրեականության ուսումնասիրության և տարածաշրջանագիտության համար:

Հետազոտության օբյեկտ է հանդիսացել XIX դարավերջի և XX դարասկզբի Ղազախի գավառի հայաբնակ գյուղերի առօրեականությունը, իսկ հետազոտության առարկան՝ դազախահայ գյուղերի ինքնակառավարման համակարգի առանձնահատկությունների, ընտրությունների և պաշտոնեության նշանակման առօրեական խնդիրները: Հետազոտության նպատակն է համապարփակ ուսումնասիրության ենթարկել դազախահայության գյուղական ինքնակառավարման համակարգի առօրեականությունը, որի շրջանակներում կարևորել ենք «Մշակ» թերթի աղբյուրագիտական նշանակությունը, բացահայտել ինքնակառավարման մարմինների կազմակերպման տեղական առանձնահատկությունները և լոկալ հանրային վերաբերմունքը ինքնակառավարման մարմինների, հերթական ընտրությունների նկատմամբ և մասնակցության ակտիվությունը այդ գործընթացում:

Գյուղական ինքնակառավարման համակարգը և նրա շուրջ զարգացումները համապատասխանում էին ժամանակի քաղաքական և տնտեսական հրամայականներին: Շինական ժողովներն ու դրանց ազդեցությունը գյուղական առօրեականության վրա անառարկելի է, քանի որ ժողովն էր իրականացնում համայնքի ինքնակառավարման բոլոր օղակների ձևավորումը, գյուղական կարևորագույն որոշումների կայացումը: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գյուղական առօրեականությունը ձևավորվում և շրջանառվում էր գլխավոր պաշտոնյաների՝ տանուտերի և նրա գրասենյակի շուրջ, որոնց աշխատանքի արդյունավետությունից էլ կախված էր գյուղական հասարակության վերաբերմունքը շինական ժողովների և ընտրված պաշտոնեության նկատմամբ:

With the election of Donald Trump as the U.S. President, some analysts suggested that there could be positive changes in Georgia-Russia relations, given Trump's softer stance towards Russia during his first presidency. However, despite these potential shifts, political relations between Georgia and Russia remain tense, primarily due to their deep-seated contradictions on the issues of Abkhazia and South Ossetia.

The restoration of diplomatic relations between Russia and Georgia would be a challenging process. For Tbilisi, the restoration of territorial integrity is a non-negotiable condition for any diplomatic rapprochement. Meanwhile, Moscow is constrained by its recognition of Abkhazia and South Ossetia as independent states. This significant difference in position means that any potential diplomatic resolution would require bilateral compromises, and a temporary status could be a possibility until a final settlement is reached.

Despite the Georgian government's continued emphasis on the importance of settling relations with Russia as part of its broader foreign policy, bilateral relations have remained somewhat frozen and passive, particularly outside of the economic sphere. However, this should not be seen as a signal that Georgia is moving away from the West. While the relationship with Russia has evolved in economic terms, Georgia's aspirations for integration with the EU and NATO remain central to its foreign policy direction. The country continues to balance its economic ties with Russia with its strategic ambitions towards the West.

REFERENCES

- Հովհաննիսյան, Ի. (2012, October 2). Վրացական երազանքը առաջատար Azatutyun. <https://www.azatutyun.am/amp/24726095.html>
- Մուսայելյան, Լ. (2019, June 20). Վրաստանում տապալել են Ուղղափառության միջխորհրդարանական վեհաժողովի նիստը. Azatutyun. <https://www.azatutyun.am/amp/30010459.html>
- Ассоциация с ЕС: какие выгоды получают Грузия и Молдавия?* (2016, July 1). dw.com. <https://bit.ly/3sZO5nq>
- Григорьев, Л. М., Павлюшина, В. А., Кулаева, Н. М., & Музыченко, Е. Е. (2019). Экономика Грузии: Хрупкая экономическая стабильность. Вопросы экономики, 10, 64–84. <https://doi.org/10.32609/0042-8736-2019-10-64-84>

- Джанелидзе, М. (n.d.). На заседании комиссии НАТО-Грузия была выражена готовность продолжить поддержку повышения обороноспособности Грузии. 1TV. <https://1tv.ge/ru/news/88788/>
- Карасин приветствует заявление избранного президента Грузии.* (n.d.). РИА Новости. <https://bit.ly/3xA15DM>
- Министерство иностранных дел Российской Федерации.* (н.д.). Российско-грузинские отношения. Министерство иностранных дел Российской Федерации. <https://bit.ly/2PCdDcH>
- Российское телевидение возвращается в Грузию.* (n.d.). <https://bit.ly/332wJM8>
- Экономика Грузии в пространстве противоречий региональных держав <https://bit.ly/3vqAdnC>
- Council of the European Union.** (n.d.). Georgia. *European Union.* <https://www.consilium.europa.eu/en/policies/enlargement/georgia/>
- Ministry of Defence of Georgia.** (2011). *New concept of national security of Georgia.* <https://mod.gov.ge/uploads/2018/pdf/NSC-ENG.pdf>
- National Democratic Institute.** (2024). Public attitudes in NDI-commissioned survey. *Civil Georgia.* <https://civil.ge/archives/393027/amp>
- NATO.** (n.d.). Relations with Georgia. *North Atlantic Treaty Organization.* https://www.nato.int/cps/en/natohq/topics_38988.htm
- USA Facts.** (2024). Economy of Georgia: Is the economy of Georgia growing? What's the unemployment rate? How large is the state's economy? *USAFacts.* <https://usafacts.org/topics/economy/state/georgia/>
- NATO.** (2014, September 5). Zayavleniye po itogam vstrechi na vysshem urovne v Uyel'se. *NATO.* https://www.nato.int/cps/ru/natohq/official_texts_112964.htm
- Antidze, M., & Osborn, A.** (2019, March 21). Georgian president calls Russia 'enemy and occupier,' accuses Kremlin 'fifth column' of stirring unrest. *National Post.* <https://nationalpost.com/news/world/georgian-president-calls-russia-enemy-and-occupier-accuses-kremlin-fifth-column-of-stirring-unrest>
- National Democratic Institute.** (2019, July 3). Opinion survey 2019: Georgia. *National Democratic Institute.* <https://bit.ly/3e3sdTW>
- Civil.ge.** (2020, February 20). Public attitudes in NDI-commissioned survey. *Civil.ge.* <https://civil.ge/archives/393027/amp>
- Ostiller, N., & The Kyiv Independent.** (2024, April 11). EU's ambassador to Georgia says foreign agents bill 'incompatible' with European values. *Kyiv Independent.* <https://kyivindependent.com/eus-ambassador-to-georgia-says-foreign-agents-bill-incompatible-with-european-values/>

REFERENCE LIST

- Oganesyan, I.** (2012, 2 oktyabrya). Lider «Gruzinskoj mechty» (*The Georgian dream is the leader*). Azatutyun. <https://www.azatutyun.am/amp/24726095.html>
- Musaelyan, L.** (2019, 20 iyunya). V Gruzii otmenili zasedanie Mezhparlamentskoj assamblei pravoslaviya (*In Georgia, the session of the Interparliamentary Assembly of Orthodoxy has been disrupted*). Azatutyun. <https://www.azatutyun.am/amp/30010459.html>.
- Associaciya s ES: kakie vygody poluchat Gruzija i Moldova?* (*Association with the EU: What benefits will Georgia and Moldova receive?*). (2016, 1 iyulya). dw.com. <https://bit.ly/3sZO5nq>.
- Grigor'ev, L. M., Pavlyushina V. A., Kulaeva N. M., Muzychenko E. E.** (2019). Ekonomika Gruzii: Hrupkaya ekonomicheskaya stabil'nost'. Voprosy ekonomiki (*Georgia's Economy: Fragile Economic Stability. Economic Issues.*). 10, 64–84. <https://doi.org/10.32609/0042-8736-2019-10-64-84>.
- Dzhanelidze, M.** (bez daty). Na zasedanii komissii NATO-Gruzija byla vyrazhena gotovnost' i dal'she podderzhivat' uluchshenie oboronosposobnosti Gruzii. (*At the NATO-Georgia Commission meeting, there was an expressed readiness to continue supporting the enhancement of Georgia's defense capabilities.*). 1TV. <https://1tv.ge/ru/news/88788/>.
- Karasin privetstvuet zayavlenie izbrannogo prezidenta Gruzii.* (*Karasin welcomes the statement of the elected president of Georgia*). (bez daty). RIA Novosti. <https://bit.ly/3xA15DM>
- Ministerstvo inostrannyh del Rossijskoj Federacii.* (bez daty). Rossijsko-gruzinskie otnosheniya (*Russian-Georgian relations*). Ministerstvo inostrannyh del Rossijskoj Federacii. <https://bit.ly/2PCdDcH>
- Rossijskoe telprostranstvo protivorechij regional'nyh gosudarstv* (*Russian television is returning to Georgia*). <https://bit.ly/3vqAdnC>evidenie vozvrashchaetsya v Gruziju. (bez daty). <https://bit.ly/332wJM8>
- Ekonomika Gruzii v prostranstve protivorechij regional'nyh derzhav* (*Georgia's economy in the context of regional powers' contradictions*). <https://bit.ly/3vjaAdnC>
- Council of the European Union.** (n.d.). Georgia. European Union. <https://www.consilium.europa.eu/en/policies/enlargement/georgia/>.
- Ministry of Defence of Georgia.** (2011). New concept of national security of Georgia. <https://mod.gov.ge/uploads/2018/pdf/NSC-ENG.pdf>.
- National Democratic Institute.** (2024). Public attitudes in NDI-commissioned survey. Civil Georgia. <https://civil.ge/archives/393027/amp>.
- NATO.** (n.d.). Relations with Georgia. North Atlantic Treaty Organization. https://www.nato.int/cps/en/natohq/topics_38988.htm.

- USA Facts.** (2024). Economy of Georgia: Is the economy of Georgia growing? What's the unemployment rate? How large is the state's economy? USAFacts. <https://usafacts.org/topics/economy/state/georgia/>.
- NATO.** (2014, September 5). Zayavleniye po itogam vstrechi na vysshem urovne v Uyel'se. NATO. https://www.nato.int/cps/ru/natohq/official_texts_112964.htm.
- Antidze, M., & Osborn, A.** (2019, March 21). Georgian president calls Russia 'enemy and occupier,' accuses Kremlin 'fifth column' of stirring unrest. National Post. <https://nationalpost.com/news/world/georgian-president-calls-russia-enemy-and-occupier-accuses-kremlin-fifth-column-of-stirring-unrest>.
- National Democratic Institute.** (2019, July 3). Opinion survey 2019: Georgia. National Democratic Institute. <https://bit.ly/3e3sdTW>.
- Civil.ge.** (2020, February 20). Public attitudes in NDI-commissioned survey. Civil.ge. <https://civil.ge/archives/393027/amp>.
- Ostiller, N., & The Kyiv Independent.** (2024, April 11). EU's ambassador to Georgia says foreign agents bill 'incompatible' with European values. Kyiv Independent. <https://kyivindependent.com/eus-ambassador-to-georgia-says-foreign-agents-bill-incompatible-with-european-values/>.

ԱՄՓՈՓՈՒՄ

ՎՐԱՍՏԱՆ-ՌԴ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԻ»

ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

ԿԱՐԵՆ ԴԱԶԱՐՅԱՆ

Վրաստան-ՌԴ հարաբերությունների ներկայիս փուլը սկսվել է 2012 թվականից երբ իշխանության եկավ «Վրացական երազանք» կուսակցությունը և փոփոխություններ մտցրեց արտաքին քաղաքական կուրսում: Հասկանալու համար երկկողմ հարաբերությունների ներկայիս ընթացքը կարևոր է վերլուծել այն գործընթացները, որոնք տեղի են ունեցել կողմերի միջև սկսած 2012 թվականից: Գիտական աշխատանքի նպատակն է վերլուծել երկկողմ հարաբերությունները «Վրացական երազանքի» իշխանության գալուց հետո, ներկայացնել առկա խնդիրներն ու մարտահրավերները, հետազոտել այդ հարաբերությունների բնույթը, ինչպես նաև աշխարհաքաղաքական զարգացումների ազդեցությունը հարաբերությունների վրա: Գիտական աշխատանքը շարադրելիս օգտագործել ենք պատմահամեմատական, իրադարձային եւ բովանդակային վերլուծությունների համակարգային մեթոդները:

Ձեռքբերումներ: Վրաստան-ՌԴ հարաբերությունները 2012 թվականից դինամիկ աճ են գրանցել մի քանի ոլորտերում՝ փոխելով հարաբերությունների բնույթը և ընթացքը, ՌԴ-ն դարձել

Է Վրաստանի տնտեսական առաջատար պետություններից մեկը, սակայն քաղաքական առումով երկկողմ հարաբերություններում առկա խնդիրները Աբխազիայի և Հարավային Օսիայի հետ կապված շարունակում են մնալ չուժված:

Բանալի բառեր: Վրաստան, Ռուսաստանի Դաշնություն, երկկողմ հարաբերություններ, Հարավային Կովկաս, արտաքին քաղաքականություն, բազմակողմ դիվանագիտություն:

РЕЗЮМЕ
ГРУЗИНО-РОССИЙСКИЕ ОТНОШЕНИЯ В ПЕРИОД ГРУЗИНСКОЙ МЕЧТЫ К
ВЛАСТИ
КАРЕН КАЗАРЯН

Современный этап грузино-российских отношений начался в 2012 году, когда к власти пришла партия «Грузинская мечта» и внесла изменения во внешнеполитический курс. Чтобы понять текущий ход двусторонних отношений, важно проанализировать процессы, происходящие между сторонами с 2012 года. Цель научной работы – проанализировать двусторонние отношения после прихода к власти «Грузинской мечты», представить существующие проблемы и вызовы, исследовать природу этих отношений, а также влияние геополитических событий на отношения. При написании научной работы мы использовали системные методы историко-сравнительного, событийного и контент-анализа.

Достижения. С 2012 года в отношениях между Грузией и Российской Федерацией наблюдается динамичный рост по ряду направлений, меняя характер и ход отношений, Российская Федерация стала одним из ведущих экономических государств Грузии, но в политическом плане возникли проблемы в двусторонних отношениях с Абхазия и Южная Осетия остаются нерешенными.

Ключевые слова. Грузия, Российская Федерация, двусторонние отношения, Южный Кавказ, внешняя политика, многосторонняя дипломатия.

Հոդվածը ստացվել է՝ 02.09. 2024

Հոդվածն ուղարկվել է գրախոսման՝ 07.09. 2024

Հոդվածը երաշխավորվել է տպագրության՝ 24.11.2024

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ
ՏԱՆՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՂԵԾՐԵՐՈՒՄ

ՕՖԵԼՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Շիրակի պետական համալսարան

Էլ. *hauugk*՝ ofelya.hovhannisyan82@gmail.com

DOI: 10.24234/scientific.v2i47.167

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածի հետազոտության օբյեկտ է հանդիսացել արդի գրականության վառ անհատականություններից մեկի՝ վաղամեռիկ բանաստեղծուհի Տանյա Հովհաննիսյանի բանաստեղծական աշխարհը:

Հետազոտության նպատակն է առաջին անգամ գիտական հոդվածով և ոչ թե գրական անդրադարձով գրականագիտական վերլուծության ենթարկել հեղինակի բանաստեղծական ժառանգությունը, որի մեջ յուրաքանչյուր մարդ կարող է տեսնել իր հոգեաշխարհի արտացոլանքը, կարդալ իր խոհերի և խոկումների պատասխանները, դիտարկել մարդկային հոգեբանության ելևէջներն ու տարուբերումները և, վերջապես, հաղորդակից դառնալ բանաստեղծական ինքնատիպ դրսևորումների, որոնք իրենց վրա ոչ մի գրական ազդեցության դրոշմ չեն կրում, և որոնք ավարտվում են բազմակետերով, այսինքն՝ ժամանակակից իրականության մեջ յուրաքանչյուր մարդ կարող է իր հոգեբանությանը հարիր մտքեր և ձևակերպումներ հավելել:

Արձանագրենք՝ այն ակնառու փաստը, որ Տանյա Հովհաննիսյանի յուրատիպ արվեստն այսօր ունի արդիական լիցքեր՝ իր մեջ պարփակելով մերօրյա իրականության խառնարանում դեգերող մարդու հոգեաշխարհը բնութագրող գաղափարներ և դիտարկումներ՝ կենդանագրված իսկական արվեստագետին բնորոշ հատու վրձնահարվածներով:

Բանալի բառեր՝ քնարական կերպար, բանաստեղծական աշխարհ, պատում, լույս, խորհրդապատկեր, բնություն, ներհյուսում, բազմաշերտ խառնվածք:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բանաստեղծուհի Տանյա Հովհաննիսյանն իր ապրած կյանքի ծաղկուն հետագիծն է թողել հայ գրական երկերում, ժամանակի բանաստեղծական խառնարանում նոր երանգներ է հավելել: Ստեղծագործական կարճատև կյանքի ընթացքում նա մշտապես ունկնդրել է ժամանակի ձայնը՝ բացահայտելով իր բանաստեղծական նախասիրություններն ու գրական կարողությունները՝ միտված հայրենի պոեզիայի գույների հարստացմանը: Տանյա Հովհաննիսյանի բանաստեղծական

աշխարհի յուրատիպ շերտերն արվեստի ինքնատիպ վավերագրերն ունեն: Բանաստեղծուհու յուրաքանչյուր գիրք կարծես նախորդի պատվաբեր շարունակությունն է՝ գաղափարական նոր ընդգրկումներով, կատարման նրբերանգների բազմազանությամբ:

Բազմաշերտ է Տանյա Հովհաննիսյանի երգերի հյուսվածքը: Բանաստեղծուհու գրույցն իր ընթերցողի հետ անմիջական է, փիլիսոփայորեն ներհուն, զգացմունքներով՝ ջերմացնող: Յուրաքանչյուրը նրա ստեղծագործության մեջ կարող է գտնել իր համար ու իր մասին գրված տողեր, նաև ապագայի շեշտակի լիցքերով հագեցած:

Բանաստեղծուհին մահացել է 41 տարեկանում. նա գոհ է դարձել 1988թ. ավերիչ երկրաշարժին: Այդ տարիքում Տանյա Հովհաննիսյանն ուներ արդեն հրատարակված երկու գիրք՝ «Հրաբուխի ծաղիկ» և «Եվայի հեքիաթները» խորագրերով: Մահից հետո լույս են տեսել բանաստեղծուհու «Բաց հրապարակ» և «Բանաստեղծություններ» գրքերը: Տանյա Հովհաննիսյանի գրական ամբողջ ժառանգությունը տպագրված է: Բանաստեղծուհու նախասիրած գրական ժանրը թեև պոեզիան է, բայց ունի նաև գեղարվեստական ինքնատիպ արձակ, որի քննությունը սույն հոդվածի առաջիկ նպատակներից չէ: Ուշարժան է այն կարևոր փաստը, որ բանաստեղծուհին քնարերգության մեջ իր կենսագիրն է, նրա ստեղծագործություններում իր կյանքն ու ապրումներն են: Հավելենք, որ գրաքննադատության մեջ բանաստեղծուհու գրական ժառանգությանը քիչ անդրադարձներ են եղել: Տանյա Հովհաննիսյանի ստեղծագործության մասին առաջին գնահատականը տվել է անվանի բանաստեղծ Վահագն Դավթյանը: Ապա բանաստեղծուհի գրական խառնվածքի և նախասիրությունների մասին գրական անդրադարձով է հանդես եկել բանաստեղծ Արմեն Մարտիրոսյանը: Վերջինս նկատում է. «Մենք հանկարծ հասկանում ենք, որ մի կյանք ապրել ենք այդ աշխարհում, բայց երբեմն անցել ենք կողքից և զարմանալիորեն չենք նկատել: Իսկ նա՝ ուրիշին չկրկնող բանաստեղծուհին, պարզվում է, տեսել է, և իրեն հատուկ անմիջականությամբ մեզ է ներկայացրել մեր էության խորքում բնակվող, բայց շրջանցված, չնկատված գույնն ու երանգը» (Հովհաննիսյան Տ., 2013):

Հոդվածում գրականագիտական վերլուծություններն իրականացրել ենք՝ հենվելով բանաստեղծությունների վրա, միաժամանակ հենք ընդունելով ժամանակակից գրականագիտության մոտեցումներն ու ընկալումները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ելնելով հոդվածի հիմնական առաջադրույթներից՝ բանաստեղծուհու ստեղծագործությունների քննարանության համար ընտրել ենք նկարագրական, վերլուծական, նաև համադրական մեթոդները, քանի որ այդ ամենը առթում են իրականացնելու գրականագիտական ճշմարիտ վերլուծություններ՝ հենվելով հեղինակի ստեղծագործությունների վրա: Վերջիններս բավարար հնարավորություններ ստեղծեցին թափանցելու այդ յուրատիպ

արվեստի և գեղագիտության խորքը, բացահայտելու դրանց հմայքն ու կենսական ճշմարտությունները:

Ահա, օրինակ, «Փոքրիկ լույս» բանաստեղծությունը: Քնարական հերոսը, կիսամութի մեջ նստած, զրուցում է լույսի գրեթե աննկատելի մի ճառագայթի հետ: Այդ փոքրիկ լույսը քնարական հերոսի կյանքն է, ապրելու հույսը, նրա սերը, նրա զավակը: Միահյուսվում են բանաստեղծուհին և քնարական հերոսը, զրույցը դառնում է անկաշկանդ, պարզ ու անսեթևեթ.

Փոքրի՛կ լույս,

Այս իրիկուն ես քեզ հետ նստել եմ

Միակ իմ այթռո՞հն՝ միակ իմ տան մեջ,

Եվ հնչարկում են միակ հնչունը՝

Սիրո սեր,

Եվ քո միակ ճակատագրի մեջ

Լողանում եմ տաք ու արևոտ,

Ու ոսկեջուր-

Ինչպես արևային անձրևի մեջ՝

Ծաղիկն է լողում միակ... (Հովհաննիսյան Ս., 2013)

Բանաստեղծուհու երկերում լույսը ինքնատիպ խորհուրդ ունի. այն համասփյուռ է ու անպարփակ, հառնող, ընդվզուն ու ճովողուն: Լույսը կյանքն է, կյանքի խորհուրդն ու բնությունը: «Լույս» բանաստեղծության մեջ լույսը բնութագրվում է իբրև «ծաղիկ-ինքդ քեզ բացված-ինքնարարումով...»: Լույսի գեղեցկությունն աղարտվում է մարդու ձեռամբ.

...Մարդու նմանը կոման դանակը խրեց մարդկային սրտի մեջ:

...Իսկ ապա ինչպես-չժայթքեցիր,

Ճար չարեցիր ու փակեցիր ծաղկաբաժակիդ թերթերը,

մարմրեցիր ու հանգչեցիր այն մեռնող մարդու

մարմրող աչքի պես... (Հովհաննիսյան Ս., 2013):

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ներքոչարադրյալում առանձնադիտվել են գրականագիտական վերլուծության արդյունքներն ու եզրահանգումները: Բանաստեղծուհին, ճաշակած լինելով կյանքի դառնությունները, լույսի շատն է ուզում, որպեսզի մարդկանց մարդանայը տեսնի: Վահագն Դավթյանի բնութագրմամբ՝ «Տանյա Հովհաննիսյանի բանաստեղծությունները գուրկ են արտաքին փայլից, արտաքուստ գրական վարպետություն չեն ցուցաբերում, բայց խորքում հոգևոր գեղեցիկ հարստություն ունեն» (Հովհաննիսյան Ս., 2013):

Կենսագրական պատումները երևակվում են Տանյա Հովհաննիսյանի կոնկրետ ստեղծագործություններում, ինչպիսին բանաստեղծուհու քնարական երկերն են: Բանաստեղծական ինքնատիպ ձևային ճանաչողական ու գեղարվեստական հմայք են տալիս պատմական ասելիքի բովանդակային խորքի ու տարողությունը.

Ինչպես լռում է շուրջն-

Ամեն ինչ,

Երբ լռում է ճովողունը

Թռչունների-կարմիր այգում-

Հանկարծ,-

Այդպես լռում է կյանքս,

տես, երբ սերն է իմ-լուռ լռում,

Արեգակից շուտ մայր մտնում ու մարմրում...

Պատկերավոր է Տանյա Հովհաննիսյանի խոսքը: Բանաստեղծուհու մոտ պայծառ են ոչ միայն տրամադրությունները, այլև բնության կողմերն ու երևույթները, պայծառ են բառերը: Նրա բանաստեղծություններում լույսը զուգորդվում է արևին ու լավատեսությանը: Այդպիսին է «Առավոտ լուս» բանաստեղծությունը.

Ամեն մարդ էլ աղավնի է ու երագանք,

վարդը ձեռքին երջանկություն

Օ՞ առավոտ, օ՞... կույս աղջիկ, օ՞, իմ մանուկ,

երբ ես դառնում դու անհավատ, թերի մաղձոտ ու անհոգի (Հովհաննիսյան Տ., 2013)

Հեղինակը երգել է իր սրտին շատ մոտ ու ծանոթ, այդ սրտի միջով անցնող հույզը, սրտին պարուրած գաղափարը:

Բանաստեղծուհին ստեղծագործական հմտությամբ է իր ասելիքի արմատները որոնում բնության մեջ՝ խարսխվելով բանաստեղծական նոր հունձքի շրջանակներում: Բազմազույն ու բազմաբույր են հայրենի բնությանը ներբողած երգերը: Նրանցում կան խոր կարոտ, մանկութ-
օրերի քաղցրություն, արարչագործության անզուգական պատկերներ.

Ծառն սպասում էր,-

անձրև իջավ նրա երակներով,

ու ծառը դարձավ ծառ:

...Ես սպասում էի,-

Անձրևն իջավ իմ երակներով, ես ժպտացի ու մնացի մարդ,

Իսկ դո՞ւ-այդ ե՞րբ պիտի մոտենաս ինձ, որ հարատևեմ...

Տանյա Հովհաննիսյանի բանաստեղծերը խորհրդանշում են անկոտրում կամք, հավաստի հավատ կյանքի ու կենսասիրության հանդեպ: Բանաստեղծուհին ընթերցողի առջև բացում է իր հոգու

գաղտնարանները՝ ոչինչ չթողնելով քողարկված: Նա սիրում է անկեղծ ու ազնիվ լինել և իր տողերն էլ խմորում է անապական զգացումներից: Տանյա Հովհաննիսյանի քառասունմեկամյա կյանքը ծաղկուն ճանապարհ է, ստեղծագործական բարձունքների հասնելու կամք և պայքար, որն արդյունք է այն խոսուն նշխարների, որոնցով զարդարվել է նրա ստեղծագործական աշխարհի երփներանգ հյուսվածքը: Բանաստեղծուհու ստեղծագործության յուրատիպ կենսունակությունը նորի ինքնատիպ շաղախի մեջ է՝ հայ գրականության լավագույն արմատներից ակունքված.

Պետք չէ ինձ սրբել, ես դեռ անսահման պիտի հորդանամ-

Չպիտի նրբանամ-

պիտի ցած թափվեմ, վարարեմ, գոչեմ

ու առաջ երթամ

ոչ թե քո՝-

արևի ձեռքով պիտի չորանամ...(Հովհաննիսյան Տ., 2013):

Բանաստեղծուհի Տանյա Հովհաննիսյանի երկերում հայրենիքը վերացական չէ: Այն սկսվում է հայրական օջախից, ծննդավայրից: Նրա բանաստեղծական հոգում հայրենի երկրի ու ժողովրդի ճակատագիրն առնչվում է մարդկության ճակատագրին: Իր ժողովածուներով բանաստեղծը հաստատում է սերտ կապը կյանքի ամենաբազմազան հարցերի հետ: Տանյա Հովհաննիսյանի երգը ծնվում է կյանքից, օջախից, աշխարհից, կարոտից, մարդկային ապրումներից: Դրանք ջերմ ու տաք մենախոսություններ են, որոնցում բացվում են քնարական հերոսի բազմաշերտ հոգեբանության գծերը: Ինքնատիպ են բանաստեղծուհու կերտած քնարական հերոսի կերպարը և պատկերաստեղծման արվեստը: Մեր առջև ժամանակակից մարդու կերպարն է՝ իր բարդ ու ելևէջուն հոգեաշխարհով, զգայուն սրտով: Այդ մարդուն բնորոշ է այն ամենը, ինչը մարդկային է: Ինչպես նկատում է Ա. Մարտիրոսյանը, «Այս ամենին ունկնդիր՝ քնարական հերոսի հոգեբանությունը նույնպես բազմաշերտ է, նա մերթ ձուլված է հնադարյան առասպելներին ու լեգենդներին, մերթ ապրելու, սիրելու, բաժանման ու կարոտի պարզևած լույս ու թախիծի մեջ է շաղախված, մերթ էլ ապագայում, ուր երագների աշխարհը շնկշնկում է ցանկալի քամու պես, գալիս մաքրում կյանքի պարտադրած հոգսն ու կնճիռը...» (Հովհաննիսյան Տ., 2013):

Նա հաճախ է մտովի դեգերում տիեզերքի անհունում՝ գրուցելով բնության հետ, խորհրդածում աշխարհիս չարի ու բարու մասին, փնտրելով մարդկային գոյության իմաստը: Տանյա Հովհաննիսյանն հայտնագործում է աշխարհընկալման նոր մոտեցումներ: Ինքնատիպ արվեստի բուն ընդերքում կարծես *պոեզիան գեղասկարչության* է վերածվում՝ տազնապախտով զգայնությունների խորքով, անձնական դրամայի ողբերգությամբ.

Ես ուշացումով չեմ կանչում քեզ ետ-

Դու մի ուշանա քո վերադարձով-

Թող տեղ քնքշանքի անձրևն ու լացը...(Հովհաննիսյան Տ, 2013).

Բանաստեղծուհու համար բնությունը դառնում է ներփակ զգայնությունները բացող միջոց, աստվածային պարզև, լուռ քերթված, գեղեցկության սահման: Նրա կողմից կենդանագրած ապրումներով քնարական հերոսը *մարդկային դիմագիծ է ստանում՝ երբեմն վերածվելով հավաքական կերպարի, իրականության մեջ տառապող, ներքին հակասականությամբ, հոգեբանական ելևէջներով, բարդույթներով, սիրով ու կորուստներով տառապող մարդկանց հավաքական կերպարի.*

Ես նկարիչ չեմ,

Բայց եթե նկարեմ իմ աչքերը

Եվ նկարն անվանեմ

«Տխրություն»,

Բոլորը կխոսեն տաղանդիս մասին:

Նշենք, որ Տանյա Հովհաննիսյանը պատանեկան թոթովանքների ուղի չի անցել: Նրա մուտքը սրտերի միջով եղավ դեպի քնարերգություն ու քնարերգությունից՝ սրտեր:

Բնությունից դեպի մարդկային արարքներ կոնկրետ գնահատականը բանաստեղծուհու մոտ տեղի է ունենում դարձյալ բնության միջոցով, և նրա աշխարհի սահմաններն ընդգծվում են բնությունից մարդ, մարդուց՝ բնություն եզրերով, և որ շատ կարևոր է, հատկանշվում են նրա ոճը, հղացումների դրսևորման ձևերը, նյութի և մտածողության ներդաշնակությունը: Այդ առումով հաջող օրինակ է «Գիշերն իջել է» տողով սկսվող բանաստեղծությունը: Գունային համակարգից ծնվում է բանաստեղծական գյուտ-ընդհանրացումը, որով հաստատվում է առողջ քայլերից սկիզբ առնող հավիտենության գաղափարը.

Գիշերն իջել է:

Մի խոր ու հանգիստ

Քուն է անհրաժեշտ

Քեզ մոռանալու, տված տանջանքդ ցրելու համար:

...Եթե գիշեր է, լուսնյակ գիշեր է...

Տանյա Հովհաննիսյանի պոեզիայում ամեն ինչ շարժման մեջ է:

Բնության հանդեպ եղած սերը պարզապես բուրվառվում է որպես բանաստեղծական ներշնչանք: Դրանով էլ պայմանավորվում են բանաստեղծի ինքնատիպության չափն ու կշիռը, գույնն ու փայլը:

Ժողովածուի տարբեր մոտիվներ ընդգրկող երկերում սրտի դողով, հոգու ջերմությամբ, արյան եռքով բանաստեղծուհին բնության հետ է, անմիջական է, փիլիսոփայորեն ներհուն, զգացմունքներով՝ ջերմացնող.

Քամին շքերթի է հանել

Տերևներին ասֆալտի վրա...

...Իսկ ես կամովին

Դարձել են ասպարեզ,
Ծափահարում են հարգալից՝
Կեցցե՛ տերևաթափությունը,

Մաշված օրերիս կտորտանքը դեղին (Հովհաննիսյան Տ., 2013) :

Հղանալով բնության հետ զրուցելու տարբեր վիճակներ՝ Տանյա Հովհաննիսյանը բանաստեղծական տաղաչափական բազմազան խմորումներով ստեղծում է հայրենի բնության կերպարը: Պատկերային բնանկարների և համապատասխան հոգեվիճակների հիանալի օրինակներ են նրա շատ բանաստեղծություններ:

Օ՛յ, ինչ խելոք և ինչ իմաստուն-
թևերս կանաչ, թևերս թռչուն-
նվազի տակ են ասես շունչ առել,
որ հենց նվազն է բարձրանում օդում,
բարձրանում են վե՛ր... (Հովհաննիսյան Տ, 2013)

Շարժման ընթացքի մեջ իրենց վեհությունն են ներկայացնում բնության պատառիկները, որոնք բանաստեղծի համար և՛ շոշափելի են, և՛ հոգևոր նախշեր՝ տառապած, բնության մեջ անդորր ու հոգեկան խաղաղություն փնտրող մարդու հայացքով: Բերենք «Գարնան քամիներն են սիրում» բանաստեղծության ավարտը.

Դու երբեք ձմռան կողմերից չե՛ս փչի,
ես միշտ թույլ ու օրորուն եմ, կտապալվե՛մ,
դու գարնան քամի ես... (Հովհաննիսյան Տ, 2013).

Տանյա Հովհաննիսյանը մարդու ամենօրյա երթ ու եռքի մեջ էլ է երգ տեսնում: Դա սովորական երգ չէ, այլ բերկրանքի ու թախծի, նվիրումի ու արևելու տենչ: Այսպիսով, մարդն ու բնությունը ներկայացվում են միաձույլ ճակատագրով.

Նկարեցե՛ք, գուցե՛ ավելի լավ,
դո՛ւք նկարեցեք ծո՛վս, ծո՛վս... (Հովհաննիսյան Տ., 2013)

Տանյա Հովհաննիսյանի ինքներգությունը զգացմունքների և իմաստությունների ներդաշնակ ամբողջականությունն է. «Գրականագետը առավել օրյեկտիվ պատկերացում ստեղծելու համար տվյալ ստեղծագործության՝ իբրև արվեստի երկի մասին, կենտրոնանում է գեղարվեստականությունն ապահովող բաղադրիչների՝ պատկերի, կոմպոզիցիայի կամ նշանային համակարգի հարցերի շրջանակում: Ինչի մասին էլ խոսում է նա, դատում է պատկերներով, հոգեբանական շեշտերով, անմիջական ներշնչանքով» (Ավետիսյան Չ., 2011):

Այս դիտանկյունից ուշագրավ է վերլուծել «Աշուն» խորագրով բանաստեղծությունը, որը կարծես մերօրյա արցախյան պատերազմների մռայլ կանխատեսումը լինի: Թվում է՝ բանաստեղծուհին մի նոր կանխասաց է՝ սպագայի մռայլ կանխատեսումներով: Ավերված

պապենի երկիր, մրգաշատ այգիներ, որոնց մեջ մորթվել ու մորթվում են քաղցրահամ մրգերը, կապտաչ, կարմրախայտ ու սպիտակուրծք ծաղիկներ, որոնք անողորքաբար առևանգվել են: Բազմաթիվ տարագիր կռունկները բռնել են օտար ճանապարհ, կռունկները, որոնք պանդուխտ հայի անձնագրերն են օտար ավերում, իսկ այստեղ կռունկի խորդանշական պատկերը միահյուսվում է ցորենի արտերով անցնող արտագաղթին: Չոհվել են տերևները, ինչ-որ մեկը գողացել է արևը, փողոցներով հոսում է դեղին տերևների արյունը: Բայց ծառերը պայքարում են մինչև վերջին տերևը, մինչև իջնի սպիտակ խաղաղությունը, ու հետո ծագի արևը.

Հաշտությունը կկնքվի

ամիսներ հետո

գալիք պատերազմից ամիսներ առաջ...

(Գրականության տեսության արդի խնդիրներ, 2016)

Տանյա Հովհաննիսյանի բանաստեղծությունների մեծ մասն ավարտվում է բազմակետերով: Այդպիսի ավարտ ունի նաև «Աշուն» վերնագրով բանաստեղծությունը, որի յուրաքանչյուր բառ ու պատկեր խորհրդապատկեր է՝ կերտված հատու վրձնահարվածներով, նրբորեն ներհյուսված բնությանը: Աշնան բնանկարի կենդանագրման միջոցով դեռ 1980-ական թվականներին բանաստեղծուհին մարգարեանում է՝ պատկերավոր և խորհմաստ կերպով մարգարեանալով 2020թ. արհավրալից օրերը... Ինչպես նկատում է գրականագետ Շ. Քալանթարյանը, «Խնդիրն ամենևին էլ չի վերաբերում լավին կամ վատին, առաջադիմությանը կամ հետադիմությանը, այլ գրական հերոսների միջավայրին ու գործունեության բնույթին, որն էլ ձևավորում է նրանց հոգեբանությունը» (Քալանթարյան Շ, 2021):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հոգվածի շրջանակներում իրականացված ուսումնասիրության արդյունքներով կարող ենք արձանագրել, որ բանաստեղծուհու ստեղծագործության շառավիղները՝ բնություն, մարդ, կյանք, միասնանում են ու ստանում իմաստ, ձեռք բերում դիմագիծ, ծիածանվում որպես ինքնատիպ որակ:

Տանյա Հովհաննիսյանի անհանգիստ հոգու հանգրվանը բնությունն է, որի հետ նա հոգևոր զրույցի էր բռնված իր կյանքի ողջ ընթացքում: Եվ այդ զրույցը Տանյա Հովհաննիսյանի ստեղծագործության կարևորագույն բաղկացուցիչներից էր: Նա չէր կարող ապրել ու ստեղծագործել առանց այդ երկնասլաց կապի, քանզի նրա ողջ էությունը սնվում էր այդ իմաստությանը, նրա սիրտը, որ բաբախում էր մարդկության հոգսերով համակված, անվերջ ճախրանքների մեջ էր:

Տանյա Հովհաննիսյանը քաղաքագիր է, որն իր հետ բերում է ոչ միայն սոսկ թեմայի, այլև միջավայրի, կենցաղի, ավելի լայն առումով՝ աշխարհայեցողության տարբերություն: Հեղինակը

հայ քնարերգության գեղարվեստական փորձի յուրացմամբ ստեղծել է քնարական յուրատիպ բնավորություն հոգեբանական ելվերումների, նկարագրության համապատկերում:

Տարակույս չկա, որ իրական կերպարը բանաստեղծանում է, երբ ոգեղեն բաղադրիչը նրա մեջ արտահայտված է հզոր լիցքերով ու ներգործուն ազդակներով: Ի վերջո այդ ամբողջը հանգեցնում է գաղափարական ճշմարիտ ուղու: Ամեն դեպքում այդ հարցադրումներն արդիական են և միտված ապագայի հեռապատկերին: Մարդուն հաղորդակցվելու, նրան զինելու, և նրա հետ միավորվելու մի համապատկեր, որը թույլ կտա, ըստ էության, հասկանալու բանաստեղծական ոգու ինքնության կենսաշարժը:

Պրակտիկական ցանկ

Ավետիսյան Չ. (2011). *Պրակտիկական ստեղծագործության հոգեբանություն*. Երևան, ԵՊՀ հրատ.

Պրակտիկական տեսության արդի խնդիրներ. (2016). Երևան, ԵՊՀ հրատ.

Հովհաննիսյան Տ. (2013). *Բանաստեղծությունների ընտրանի*. Երևան, Նաիրի հրատ.

Քալանթարյան Ժ. (2006). *Ուրվագծեր արդի հայ գրականության*. Երևան, Չանգակ-97.

Քալանթարյան Ժ. (2021). *Ժամանակների միջով, ժամանակի հետ*. Երևան, ԵՊՀ հրատ.

REFERENCE LIST

Avetisyan Z. (2011). *Psihologiya literaturnogo proizvedeniya (Psychology of a literary work)*. Erevan, izd. EGU.

Sovremennye problemy teorii literatury (Contemporary Problems of Literary Theory). (2016). Erevan, izd. EGU.

Oganesyan T. (2013): *Podboraka stihov (A selection of poems)*. Erevan, gazeta «Nairi».

Kalantaryan Dzh. (2006). *Ocherki sovremennoj armyanskoj literatury (Essays on Modern Armenian Literature)*. Erevan, Zangak-97.

Kalantaryan ZH. (2021). *Skvoz' vremena, so vremenem (Through time, with time)*. Erevan, izd. EGU.

РЕЗЮМЕ

В ТВОРЧЕСКОМ ПУТИ ТАНИ ОГАНЕСЯН

ОФЕЛИЯ ОГАНЕСЯН

Объектом исследования статьи стал поэтический мир одной из ярких личностей современной литературы, безвременно ушедшей поэтессы Тани Ованнисян:

Цель исследования-впервые подвергнуть литературному анализу поэтическое наследие автора с помощью научной статьи, а не литературной ссылки, в которой каждый человек может увидеть отражение своего духовного мира, прочитать ответы на свои мысли и размышления,

понаблюдать за взлетами и падениями человеческой психологии и, наконец, стать причастным к оригинальным поэтическим проявлениям, которые не несут на себе никакого литературного влияния и заканчиваются многоточными, то есть в современной реальности каждый человек может добавить составы: В заключение давайте зафиксируем тот выдающийся факт, что уникальное искусство Тани Ованнисян сегодня имеет актуальный заряд, заключая в себе Галу, характеризующую духовный мир человека, блуждающего в кратере современной реальности.

Ключевые слова: лирический образ, поэтический мир, покров, свет, иконография, природа, переплетение, многослойный темперамент.

ABSTRACT
IN THE CREATIVE PATHWAYS OF TANYA HOVHANNISYAN
OFELIA HOVHANNISYAN

The object of the research was the poetic world of one of the brightest personalities of modern literature, the untimely poet Tanya Hovhannisyana. The purpose of the study is to literary analyze the author's poetic heritage for the first time with the help of a scientific article, rather than a literary reference, in which everyone can see a reflection of their spiritual world, read answers to their thoughts and reflections, observe the ups and downs of human psychology and, finally, to become involved in original poetic manifestations that do not bear any literary influence and end with multi-point ones, that is, in modern reality, everyone can add compositions. As a result, we can mention that the unique art of Tanya Hovhannisyana has an actual charge today, embodying a Gala that characterizes the spiritual world of a person wandering in the crater of modern reality.

Key words: lyrical image, poetic world, covering, light, iconography, nature, interweaving, multi-layered temperament.

Հորիզոնը ամսագրվել է՝ 22.10. 2024

Հորիզոնն ուղարկվել է գրախոսման՝ 24.10. 2024

Հորիզոնը երաշխավորվել է տպագրության՝ 08.12.2024

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄՈՏԻՎԱՑԻԱՅՈՒՄ ԴԻԴԱԳԱՏՃԱՌՆԵՐԻ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՐԳԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՆՆԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Խ Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Էլ. հասցե՝ aragelyananna23@aspu.am

ԱՆԻ ԱՎԱԳՅԱՆ

Խ Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Էլ. հասցե՝ avagyanani24@aspu.am

DOI: 10.24234/scientific.v2i47.168

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննարկվում են ուսանողների ուսումնական մոտիվացիայի և ուսումնական գործունեության արդյունավետության հարցերը, ներկայացված են Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի ուսանողների շրջանում իրականացրած հետազոտության արդյունքները: Հետազոտությանը մասնակցել են Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի հոգեբանության բաժնի 2-րդ և 3-րդ կուրսի 115 ուսանողներ: Ուսանողների ուսումնական մոտիվացիայի առանձնահատկությունների հետազոտման նպատակով կիրառվել է ուսումնական գործունեության դրդապատճառների ուսումնասիրության մեթոդիկան (ձևափոխությունը՝ Ա.Ա Ռեանի, Վ.Ա. Յակունինի): Հետազոտության տվյալների մշակման արդյունքում առանձնացվել են ուսանողների ուսումնական գործունեության 5 հիմնական դրդապատճառները, որոնք առավել կարևոր են իրենց համար, վերլուծված է ընդհանրապես ուսումնական մոտիվացիայի կառուցվածքը, դրդապատճառների աստիճանակարգը:

Բանալի բառեր՝ ուսումնական մոտիվացիա, դրդապատճառների աստիճանակարգ, գիտակցված դրդապատճառներ, գործուն դրդապատճառներ, գործունեության արդյունավետություն:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների դրդապատճառային համակարգի ուսումնասիրությունն արդիական է: Նորովի քննարկման և իմաստավորման կարիք

ունեն ինչպես Բուհ ընդունվելու մոտիվացիան, այնպես էլ ուսումնառության տարիներին դրդապատճառների փոփոխության հարցերն ու խնդիրները: Ակնհայտ է, որ ուսումնական գործունեության հաջողությունը մեծապես պայմանավորված է ուսումնական մոտիվացիայի կառուցվածքի առանձնահատկություններով: Ուսանողների դրդապատճառային համակարգի ուսումնասիրության կարևորությունը պայմանավորված է նաև ուսումնական գործունեության արդյունավետության ապահովման, կրթության որակի բարձրացման, մրցունակ մասնագետների պատրաստման, կրթության կազմակերպումից և արդյունքներից դասախոսների ու ուսանողների անբավարարվածության խնդիրների լուծման անհրաժեշտությամբ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Խորհրդային հոգեբանության մեջ համակարգայնության սկզբունքի դիրքերից անձի դրդապատճառային համակարգի ուսումնասիրությունը կառուցված է «գործունեություն» և «անձնավորություն» հասկացությունների շուրջ (Լ.Ս. Վիգոտսկի, Բ. Գ. Անանև, Լ. Ռուբինշտեյն, Ա. Ասնոլով, Բ. Գ. Ասեն, Ա. Ն. Լեոնտև, Բ. Ֆ. Լոմով, Վ. Դ. Շադրիկով, Ա. Վ. Պետրովսկի և այլք): Ըստ Ս. Լ. Ռուբինշտեյնի՝ գործունեության դրդապատճառներն ու նպատակներն արտահայտում են անձի ընդհանուր ուղղվածությունը, որը գործունեության ընթացքում ոչ միայն դրսևորվում է, այլև ձևավորվում (Рубинштейн С. Л., 1989):

Ա. Լեոնտևի, Բ. Ֆ. Լոմովի, Վ. Ա. Իվաննիկովի, Լ. Ի. Բոժովիչի, Ա. Գ. Կովալյովի, Կ.Պլատոնովի, Ս. Լ. Ռուբինշտեյնի, Ս. Պ. Մանուկյանի, Յու. Օրլովի մոտեցումների վերլուծությունները պարզ է դառնում, որ դրդապատճառներում են կոնկրետանում և իրացվում անձի պահանջմունքները:

Բազմաթիվ ուսումնասիրությունների արդյունքում փաստվում է, որ մոտիվացիայի կառուցվածքով և առանձնահատկություններով է պայմանավորված Բուհ-ին ադապտացիայի և ուսումնական գործունեության արդյունավետությունը (Ջ. Մատոյան, Ն. Բ. Բադդասարովա, Ս. Բ. Դրագրով, Ա. Ա. Պակուլինա, Է. Էզիլեշվիլի, Լ.Ա. Կալմազարովա և այլք):

Ուսանողների ուսումնական գործունեության արդյունավետության պահանջմունքա-դրդապատճառային գործոնները, պահանջմունքների փոփոխությունների շարժընթացը Բուհում ուսուցման ընթացքում ուսումնասիրվել են Յու. Մ. Օրլովի աշխատանքում(Орлов Ю.М.,1984): Նա իրավացիորեն ընդգծում է, որ դրդապատճառներն անհրաժեշտ է ուսումնասիրել պահանջմունքների, գործունեության նպատակների և այն իրադրության հետ փոխհարաբերության մեջ, որում իրականացվում է այդ գործունեությունը(Орлов Ю.М., 1984): Վերջինս ենթադրում է, որ ուսումնական դրդապատճառները վերլուծելիս պետք է հաշվի առնել լայն շրջանակի հարցեր, ուսումնական իրադրության բոլոր կողմերն ու պայմանները, մասնագիտության սխալ ընտրության հարցերը, մանկավաժական գործընթացի կազմակերպման առանձնահատկությունները, ուսուցման մեթոդներն ու դասախոսների

մանկավարժական ոճը և այլն: Կարևոր են նաև ուսումնական մոտիվացիայի այնպիսի բնութագրերը, ինչպիսիք են դրանց կայունությունը, կապը ինտելեկտուալ զարգացման մակարդակի և ուսումնական գործունեության բնույթի հետ (Зимняя И. А., 2000, 232 էջ):

Ընդունված է տարբերակել ուսանողների ուսումնական գործունեության 3 հիմնական աղբյուրներ՝ ներքին, արտաքին և անհատական.

- Ուսումնական մոտիվացիայի ներքին աղբյուրներում ներառված են ճանաչողական և սոցիալական պահանջմունքները:
- Ուսումնական մոտիվացիայի արտաքին աղբյուրները պայմանավորվում են ուսանողների կյանքի պայմաններով, որի մեջ ներառված են պահանջները, ակնկալիքներն ու հնարավորությունները:
- Անհատական աղբյուրներում ներառված են հետաքրքրությունները, պահանջմունքները, վերաբերմունքները, չափանիշները, կարծրատիպերը և այլն, որոնք որոշում են ուսումնական գործունեության մեջ ինքնազարգացման, ինքնահաստատման և ինքնադրսևորման ցանկությունները (Мандель Б.Р., 2007):

Ս. Վ. Դրոզդովի ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ ուսումնական գործունեության և ադապտացիայի արդյունավետությունը պայմանավորված է ուսանողների սոցիոգեն պահանջմունքների զարգացման մակարդակով (Дроздов С.В., 2000):

Ն.Ն. Ակիմովայի ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ աֆիլացիայի պահանջմունքի բավարարումը մյուս կառույցների (նվաճումներ, իմացություն, գերակայություն) արդյունավետ իրացման պարտադիր պայման է (Акимова Н. Н., 2010):

Ե. Վ. Սամալի ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ ուսանողի անձնավորության ինքնակտուալիզացիայի կառուցվածքը բաղկացած է արժեքա-իմաստային, դրդապատճառա-պահանջմունքային և ֆունկցիոնալ-կարգավորիչ բաղադրիչներից, որտեղ հիմնային է արժեքա-իմաստային բաղադրիչը (Самал Е. В., 2008): Համաձայնվելով այս տեսակետի հետ և հենվելով փորձի վրա՝ կարծում ենք, որ ուսումնական գործունեության արդյունավետության և ուսանողների դրդապատճառներում խնդիրներ կան առավելապես արժեքա-իմաստային ոլորտում, կրթության կարևորության, արժևորման, զնահատման ու իմաստավորման հարցերն առանցքային են ողջ կրթական համակարգում:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ուսանողների ուսումնական գործունեության դրդապատճառների կառուցվածքն ու առանձնահատկությունները բացահայտելու նպատակով կազմակերպված հետազոտության ընտրակազմում ընդգրկվել են Խ. Աբովյանի անվան ՀԳՄՀ-ի Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի Հոգեբանություն մասնագիտության 2-րդ կուրսի 75 և 3-րդ կուրսի 40 ուսանողներ: Ուսանողների ուսումնական մոտիվացիայի առանձնահատկությունների

հետազոտության նպատակով կիրառվել է ուսումնական գործունեության դրդապատճառների ուսումնասիրության մեթոդիկան՝ Ա.Ա Ռեանի, Վ.Ա. Յակունինի ձևափոխությամբ(Առաքելյան Ա. Դ., 2019):

Հետազոտության արդյունքները մշակվել են մաթեմատիկական-վիճակագրական վերլուծության առաջնային մեթոդներով (կարգավորում, ընտրական միջին, ընտրական միջինից շեղում):

Մեթոդիկան բաղկացած է երկու մասից: Առաջին հատվածում 2-րդ կուրսի 70 ուսանողները 16 դրդապատճառներից ընտրել են այն 5 դրդապատճառները, որոնք առավել կարևոր են իրենց համար: Հետազոտության տվյալների մշակման արդյունքում հաշվվել է յուրաքանչյուր դրդապատճառի ընտրության քանակը, որից հետո դրանց կարգավորման արդյունքում առանձացրել ենք այն 5 հիմնական դրդապատճառները, որոնք կարևոր են 2-րդ կուրսի ուսանողների համար.

1. Դառնալ բարձր որակավորմամբ մասնագետ (64 ընտրություն) -1-ին կարգ
2. Ձեռք բերել խորը և կայուն գիտելիքներ (58 ընտրություն)-2-րդ կարգ
3. Ինտելեկտուալ բավարարվածություն ստանալ (43 ընտրություն) -3-րդ կարգ
4. Արժանանալ ծնողների և շրջապատողների հավանությանը (38 ընտրություն) -4- րդ կարգ
5. Դիպլոմ ստանալ (37 ընտրություն)-5.5 կարգ
6. Ապահովել ապագա մասնագիտական գործունեության հաջողությունը (37 ընտրություն)-5.5 կարգ

Հետազոտության արդյունքներից պարզվել է, որ հերթական պարապմունքներին միշտ պատրաստ լինելու դրդապատճառը հետազոտությանը մասնակցած 2-րդ կուրսի 75 ուսանողներից միայն 3-ի մոտ է առանձնացվել նշանակալի 5 դրդապատճառների շարքում, ընդամենը 3 ուսանողի կողմից է որպես նշանակալի գնահատվել մանկավարժական պահանջների կատարումը, մեկ ուսանողի կողմից՝ կրթաթոշակ ստանալը: Վատ ուսման համար մեղադրանքներից ու պատիժներից խուսափման դրդապատճառը ընտրվել է 2-րդ կուրսի 75 ուսանողներից միայն 6-ի կողմից, իսկ համակուրսեցիների համար օրինակ լինելու դրդապատճառը՝ 3 ուսանողի կողմից:

Այնուհետև, ուսանողներին տրվել է հրահանգ 16 ուսումնական դրդապատճառների նշանակությունը գնահատել՝ ըստ 7 միավորանոց սանդղակի: Համարվում է, որ 1 միավորը համապատասխանում է դրդապատճառի նվազագույն նշանակալիությանը, իսկ 7 միավորը՝ առավելագույն: Տվյալների մշակման և վիճակագրական վերլուծության արդյունքում ստացել ենք յուրաքանչյուր դրդապատճառի ընտրական միջին թվաքանակային ցուցանիշը և միջին քառակուսային շեղումը (տես աղյուսակ N1):

Աղյուսակ N1

Դրդապատճառների շարք	Մ – միջին թվաբանական	Միջին քառակուսային շեղում- ռ
1. Դառնալ բարձր որակավորմամբ մասնագետ:	6.62	0.85
2. Դիպլոմ ստանալ:	5.86	1.53
3. Հաջողությամբ շարունակել կրթությունը հաջորդ կուրսերում:	5.85	1.46
4. Հաջողությամբ սովորել, հանձնել քննությունները «վավ» կամ «գերազանց»:	5.66	1.46
5. Միշտ ստանալ կրթաթոշակ:	3.03	1.95
6. Ձեռք բերել խորը և կայուն գիտելիքներ:	6.60	0.88
7. Միշտ պատրաստ լինել հերթական պարապմունքներին:	5.40	1.25
8. Բաց չթողնել ուսումնական փուլի առարկաները:	5.53	1.46
9. Ետ չմնալ համակուրսեցիներից:	4.62	1.99
10. Ապահովել ապագա մասնագիտական գործունեության հաջողությունը:	6.41	0.95
11. Կատարել մանկավարժական պահանջները:	5.18	1.76
12. Արժանանալ դասախոսների հարգանքին:	5.74	1.60
13. Համակուրսեցիների համար օրինակ լինել:	4.52	2.10
14. Արժանանալ ծնողների և շրջապատողների հավանությանը:	6.04	1.68
15. Խուսափել վատ ուսման համար մեղադրանքներից ու պատիժներից:	5.07	2.17
16. Ինտելեկտուալ բավարարվածություն ստանալ:	6.37	1.71

Ընտրական միջին ցուցանիշների պատկերի վերլուծությունից երևում է, որ ամենաբարձր կարգային դիրքերում են բարձր որակավորմամբ մասնագետ դառնալու, խորը և կայուն գիտելիքներ ձեռք բերելու, ապագա մասնագիտական գործունեության հաջողությունն ապահովելու, ինտելեկտուալ բավարարվածություն ստանալու, ինչպես նաև ծնողների և շրջապատողների հավանությանն արժանանալու դրդապատճառները: Պետք է նկատել, որ

նշանակալիության ամենացածր միջին ցուցանիշներն արձանագրվել են համակուրսեցիների համար օրինակ լինելու, համակուրսեցիներից ետ չմնալու դրդապատճառներում, ինչը ենթադրում է, որ ուսումնական գործունեության դրդապատճառներում մոտիվացիայի արտաքին սոցիալական բաղադրամասերը, խմբային մրցակցության գործոնը թույլ են արտահայտված: Միևնույն ժամանակ նկատում ենք, որ այս դրդապատճառների միջինից շեղման ցուցանիշներն են բարձր, ինչը վկայում է վերջիններիս նշանակալիության գնահատման մեջ ուսանողների անհատական տարբերությունների մասին:

Հերթական պարապմունքներին միշտ պատրաստ լինելու և մանկավարժական պահանջների կատարման դրդապատճառները կրկին զիջում են մյուս դրդապատճառներին իրենց նշանակալիության գնահատման միջին ցուցանիշներով: Այստեղ հակասականություն ենք նկատում ուսանողների կողմից դրդապատճառների նշանակալիության գնահատման հարցում: Ստացվում է, որ ուսանողների կողմից հստակորեն նշանակալի գիտակցվում, գնահատվում և կարևորվում են բարձր որակավորմամբ մասնագետ դառնալու, խորը և կայուն գիտելիքներ ձեռքբերելու, ապագա մասնագիտական գործունեության հաջողությունն ապահովելու դրդապատճառները, բայց պակաս կարևոր են գնահատվում մանկավարժական պահանջների կատարման անհրաժեշտությունն ու հերթական պարապմունքներին միշտ պատրաստ լինելը: Այս պատկերը ցույց է տալիս, որ ապագա մասնագիտական գործունեության մեջ դրսևորման և հաջողության հասնելու հեռանկարի իրական չափանիշները դեռևս հստակ գիտակցված չեն: Ինչպես ցույց է տալիս ուսանողների ուսումնական առաջադիմության վերլուծությունը, եթե անգամ կոնկրետ դրդապատճառները գիտակցված են, հստակ կարևորված և գնահատված, միևնույն է վերջիններս ուսանողների մեծ մասի մոտ ակտիվությունը դրդող, ուղղորդող գործառույթը չեն կատարում, այսինքն՝ կարելի է ասել վերջիններս գիտակցված են, բայց գործուն չեն: Հնարավոր է, որ վերջիններս չեն իրացվում նաև ուսանողների ինտելեկտուալ ներուժի և ընդունակությունների սահմաններում, այսինքն՝ զուցե գիտակցում են, ցանկանում են, բայց չեն կարողանում:

2021թ-ի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին նույն հետազոտությունն իրականացվել էր Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի Հոգեբանություն մասնագիտության 3-րդ կուրսի 40 ուսանողների շրջանում, որոնց ուսուցման գործընթացը համավարակային պայմաններում կազմակերպվում էր հիբրիդային՝ առերես և առցանց ձևաչափով:

Դրդապատճառների ընտրությունների մշակման և դրանց կարգավորման արդյունքում այս ընտրակազմում առանձնացրել ենք հետևյալ 5 հիմնական դրդապատճառները.

1. Ձեռք բերել խորը և կայուն գիտելիքներ (31 ընտրություն)- 1-ին կարգ
2. Դառնալ բարձր որակավորմամբ մասնագետ (30 ընտրություն) -2-րդ կարգ

3. Ինտելեկտուալ բավարարվածություն ստանալ (29 ընտրություն) -3-րդ կարգ
4. Ապահովել ապագա մասնագիտական գործունեության հաջողությունը (22 ընտրություն)-
4- րդ կարգ
5. Դիպլոմ ստանալ (18 ընտրություն)-5 կարգ

16 ուսումնական դրդապատճառների նշանակալիության գնահատման տվյալների մշակման և վիճակագրական վերլուծության արդյունքում ստացել ենք յուրաքանչյուր դրդապատճառի ընտրական միջին թվաբանական ցուցանիշը և միջին քառակուսային շեղումը (տես աղյուսակ N2):

Աղյուսակ N2

Դրդապատճառների շարք	Մ – միջին թվաբանական	Միջին քառակուսային շեղում- σ
1.Դառնալ բարձր որակավորմամբ մասնագետ:	6.62	0.55
2.Դիպլոմ ստանալ:	6.19	2.57
3.Հաջողությամբ շարունակել կրթությունը հաջորդ կուրսերում:	6.42	0.75
4.Հաջողությամբ սովորել, հանձնել քննությունները «լավ» կամ «զերազանց»:	6.30	0.44
5.Միշտ ստանալ կրթաթոշակ:	2.88	4.92
6.Ձեռք բերել խորը և կայուն գիտելիքներ:	6.73	0.34
7.Միշտ պատրաստ լինել հերթական պարապմունքներին:	5.88	1.15
8.Բաց չթողնել ուսումնական փուլի առարկաները:	5.74	2.26
9.Ետ չմնալ համակուրսեցիներից:	4.80	1.49
10. Ապահովել ապագա մասնագիտական գործունեության հաջողությունը:	6.26	0.84
11. Կատարել մանկավարժական պահանջները:	5.71	1.34
12. Արժանանալ դասախոսների հարգանքին:	5.65	1.14
13. Համակուրսեցիների համար օրինակ լինել:	5.04	2.25
14. Արժանանալ ծնողների և շրջապատողների հավանությանը:	5.91	1.24
15. Խուսափել վատ ուսման համար մեղադրանքներից ու պատիժներից:	4.03	3.36

16. Ինտելեկտուալ քավարարվածություն ստանալ:	6.79	0.29
--------------------------------------------	------	------

Ինչպես տեսնում ենք, ընտրական միջին ցուցանիշների պատկերից, այս ընտրակազմում ամենաբարձր կարգային դիրքերում են կրկին ինտելեկտուալ քավարարվածություն ստանալու, խորը և կայուն գիտելիքներ ձեռքբերելու, այնուհետև բարձր որակավորմամբ մասնագետ դառնալու ցանկությունները, ընդ որում` այս 3 դրդապատճառների գնահատման տվյալները հավաքված են ընտրական միջինի շուրջ, անհատական տարբերությունները շատ թույլ են: Այս ընտրակազմում միջին ցուցանիշների պատկերում հաջորդ կարգային բարձր դիրքերը զբաղեցրել են հաջորդ կուրսերում կրթությունը հաջողությամբ շարունակելու, քննությունները «լավ» կամ «զերազանց» հանձնելու և ապագա մասնագիտական գործունեության հաջողությունն ապահովելու դրդապատճառները: Այս դեպքում ևս խմբային տվյալներում անհատական տարբերությունները մեծ չեն եղել` ըստ միջին քառակուսային շեղման ցուցանիշի:

Նշանակալիության ամենացածր միջին ցուցանիշներն արձանագրվել են համակուրսեցիների համար օրինակ լինելու, համակուրսեցիներից ետ չմնալու, ինչպես նաև վատ ուսման համար մեղադրանքներից ու պատիժներից խուսափելու դրդապատճառների տվյալներում: Այս ընտրակազմում ևս նկատում ենք, որ ուսումնական գործունեության դրդապատճառներում մրցակցության գործոնը, խմբում օրինակելի լինելու և աչքի ընկնելու միտումները` որպես ուսումնական մոտիվացիայի արտաքին աղբյուրներ, թույլ են արտահայտված: Հետաքրքիր էր նաև այն փաստի արձանագրումը, որ 3-րդ կուրսի ուսանողների դրդապատճառներում անհատական ամենամեծ տարբերություններն արձանագրվել են վատ ուսման համար մեղադրանքներից ու պատիժներից խուսափելու դրդապատճառների նշանակալիության գնահատման տվյալներում: Ինչ վերաբերում է միշտ կրթաթոշակ ստանալու դրդապատճառին, ապա այս դեպքում միջին ցուցանիշները երկու խմբերում էլ ցածր են եղել` ընտրական միջինից շեղման բարձր ցուցանիշներով: Սա հասկանալի է, քանի որ կրթաթոշակ ստանում են միայն մի քանի ուսանողներ, բնական է, որ միայն իրենց համար է վերջինս կարևորված:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

